№ 5 VI ՏԱՐԻ ՄԱՐՏ, 12 1897

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ԿԵՑՑԷ ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆԸ

—

Ի՞նչ պիտի անէ Յունաստանը—ահա՛ այն տանջող հարցը, որ երէկ նկարուած էր բոլոր դէմքերի վրայ…

Ի՞նչ պիտի անէ արդեօք Թզուկ Յունաստանը եւրոպական ուլտիմատումի առաջ, որը իր ցուրտ—բռնակալական ոճով խմբագրուել էր ռուսական դիւանատան մէջ։

Մի շանթ էր դա, որ ելեկտրական արագութեամբ թափանցեց քաղաքակիրթ աշխարհի բոլոր ծայրերը և տարածեց ամենուրեք մի արտասովոր յուզում, մի դողացնող անհանգստութիւն։

Յունաստանը կը խոնարհուի՞—մարգարէանում էին ոմանք։

Չի՛ խոնարհուի—հակաճառում էին ուրիշները։

Չի խոնարհուի, ապա ի՞նչ պիտի անէ։ Մի՞թէ հելլենական կառավարութիւնը այնքան խիզախ կը գտնուի, որ իր կայլիկները դէմ կը դնէ ներդաշնակ Եւրոպայի կարող ցանկութեան։ Մի՞թէ նա այնքան յանդուգն կը լինի, որ իր անմիտ քայլով կը վտանգէ՞ ազգերի խաղաղութիւնը։

Այո՛, յանդուգն եղաւ Յունաստանը։ Նա սկսեց—և անդրդուող շարունակում է սկսածը։

Նախ խնդացին խիզախի վրայ, ծաղրեցին, ծանակեցին նրան, արհամարհեցին իբր մի աննշան մեծութիւն, մի թզուկ ուժ։ Բայց օր աւուր այդ կծու ծաղրը փոխուեց լուրջ մտատանջութեան։ Յունաստանի ընթացքը վճռական եղաւ, հաստատուն։

Ի՞նչն է արդեօք ուժ տալիս հելլենական դիւանատան։

Թունաւոր սպառնալիքներ են, որ շպրտում է պաշտօնական Եւրոպան այդ դիւանատան հասցէով։

Միւս կողմից՝ բուռն ոգևորութիւն ու խանդավառ զգացմունքներ են, որ յղում է հասարակական կարծիքը նոյն Յունաստանին։

Մի կողմից գոչում են. „մոլորուել ես, թզուկ, դարձի՛ր կորստաբեր ճանապարհից, ապա թէ ոչ կամ ինքդ անդունդ կընկնես, կամ թէ Եւրոպական վառօդին կարժանանաս"։

Միւս կողմից գոռոց է տալիս Եւրոպայի ցնցուած հասարակական կարծիքը. „առա՛ջ գնա, խիզախ, լրացրու արդէն սկսած գործդ, քո դէմ է եսամոլ բռնակալութիւնը, բայց մարդկութեան լաւագոյն մասը քեզ հետ է"։

Ո՞րն է արդեօք աւելի մեծ գրաւական Աթէնքի կառավարութեան համար . . .

Հրաշունչ լեռան նման բռնկուել է ամբողջ Յունաստանը։ Հայրենասէր ռազմական ոգևորութիւնը պատել է բովանդակ երկրին։

Յոյն երիտասարդութիւնը կռուի դաշտ է շտապում, յունական կապիտալիստները լայն բաց են արել իրենց գրպանները։ Ամեն կողմից միլիոններ են խոստացւում հայրենի կառավարութեան, թող միայն սկսէ նա վաղուց փափագած պատերազմը . . .

Հայրենասիրութեան ու անձնւիրութեան այդ փայլուն փաստերի դիմաց ողբա՜ն ցաւ է յիշել հայկական իրականութիւնը։ Ողբա՜ն ամայի է դեռ մեր հոգեկան զգացմունքների դաշտը։ Հայաստանը ևս ունի հարուստներ . . .

Բայց նրանք կարծրացել են, քարացել. շահամոլութեան թանձր ժանգով ծածկուել են նրանց նեղ հոգիները։ Նրանք մինչև իսկ չեն ձգտում գէթ փոքր ամոքել իրենց առջև կանգնած թիւրք բարբարոսութեան կենդանի զոհերի քաղցն ու մերկութիւնը . . .

* * *

Ձայն տուին Եւրոպայից տասնեակ հազարաւոր անձնուէր անհատներ, բարձրացաւ Բայրոնեան Անգլիան և Գարիբալդեան Իտալիան,—Իտալիան, որ սովոր է միջազգային վեհ իդէալների ծածանեցնել կարմիրագոյն դրօշակը։

Բարբարոսների նման պաշտելի հերոսները շարժման գլուխ անցան։ Սկսուեց կամաւորների արշաւանքը։ Անհուն խանդավառութեամբ ու ցնծագին աղաղակներով բոլորն էլ միաբերան որոտացին. „դէպի Կրետէ" . . .

Եւ այնտեղ, Արշիպելագի ափերին հելլենական բուռն հայրենասիրութիւնը դիմաւորեց նրանց բարձրագոչ ովսաննաներով. „կեցցէ՛ ազատ Կրետէն, անկցի՛ տաճկական բռնակալութիւնը" . . .

Այսօր Կրետէի ազատութեան գործը կիսով չափ արդէն իրագործուած է։ Յոյն կառավարութեան յանդուգն ընթացքը ստիպեց պետութիւններին ճանաչել

Կրետէի ինքնավարութիւնը։

Բայց Կրետէի փափագն է լիակատար ազատութիւն։ Ո՞վ կարող է երաշխաւորել, որ նոյն իսկ Նրա սոսկ անուանական կախումը սուլթանից ազատ կը կացուցանէ նրան թիւրքական կամայականութիւններից։ Մի՞թէ անիշխանական թիւրքիան օրէնք է ճանաչում. . .

Կրետէի բաղձանքն է միացում Մայր-Հայրենիքի հետ։

Հարցը սուր կերպարանքով է դրուած։ այդ հարցը տանում է դէպի անխուսափելի ընդհարում Յունաստանի և Թիւրքիայի մէջ, որովհետև վերջինս նոյն իսկ կղզիի ինքնավարութեան նկատմամբ լիակատար համաձայնութիւն չի տալիս։

Պատերազմ Յունաստանի և Թիւրքիայի մէջ. . . Իսկ պերսպեկտիւո՞ւմ. այնտեղ էլ սպառնում է մի ընդհանուր աղետ, համաեւրոպական մի ահռելի կատաստրոֆա. . .

Հորիզոնը օրից օր մռայլւում է՝ ապագան մութն է, անորոշ, սակայն բախտը ըստ երևոյթին ժպտում է Յունաստանին։

„Ներդաշնակ միութիւնից" արդէն հրաժարւելու նշաններ է ցոյց տալիս Անգլիան։

Տաճկական նաւատորմիղը հիւանդ է, կարօտ արմատական բուժման. իսկ զօրքը շան պէս քաղցած է։

Դիսցիպլին չկայ. քաղցածից ի՞նչ դիսցիպլին . . .

Յունաստանը դիմում է առաջ և կը դիմէ անսասան։ Թող Նրա գլխին որոտայ պաշտօնական Եւրոպան, թող միագլխեան ու բազմագլխեան տիրանները անողորմ հարուածներով խրոխտան Նրան—նա կերթայ առաջ, մինչև որ կիրագործէ իր սրբազան առաքելութիւնը։

Նրա կողմն է ամբողջ Եւրոպայի բուռն ոգևորութիւնը, նրա կողմն են հարիւրաւոր կամաւոր խմբերը և բիւրաւոր անհատների նիւթական աջակցութիւնը։

Յուսանք . . .

Յուսանք, որ սոսկ ինքնավարութեամբ չի սահմանափակի իրերի դրութիւնը այդ մարտիրոս կղզու վրայ, այլ որ կը շարունակի ազատական կուիը, մինչև որ ընդմիշտ կը վերանան այնտեղից տաճկական բռնութիւնն ու կամայականութիւնը։

Կեցցէ՛ Կրետէն, որ ապստամբ էր տասնեակ տարիներից ի վեր և որ մնաց ապստամբ։

Կեցցէ՛ Եւրոպական կամաւոր հերոսների արշաւանքը։

Կեցցէ՛ յանդուգն ու խիզախ Յունաստանը։

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

—

29/10 փետրուար 97 թ.

Ամիս մ՚առաջ կենդանացած Պոլիսը նորէն սկսած է մեռնիլ։ Բազմամբոխ փողոցները կանսրանան։ Երկիւղը փողոցներէն տուն կը փախցնէ մարդիկ, որոնք իրենց սենեակները պինդ փակելով՝ կը յուսան ապահովութիւն գտնել, կարծելով որ մարդասպան ձեռքը չէ կարող այնտեղ հասնիլ։

Ահա քանի օրէ, որ Բամազանը սկսեր է և Մուհամէտի զաւակները իրենց օրերը կանցնեն ծոմապահութեան և աղօթքի մէջ։ Այդ օրերուն հետ սկսեր է նաև կոտորածի երկիւղը, որ շատերու երևակայութիւնով՝ աւելի սարսափելի պիտի ըլլայ, քան Օգոստոսի 14-ը։ Եւ ամբողջ Պոլիս միայն ատով է զբաղուած, օրուան խօսակցութեան նիւթը այդ է։ Հաղիւ կը պատահի, որ մէկ քանիներ չը հաւատան ատոր և հանդարտ սրտով ու խելքը գլուխը իրենց գործին երթան։ Մտքերը գրգռուած և սրտերը յուզուած են, անապահով դրութիւնը մարդոցմէ խլած է՝ թէ ախորժակ, թէ հանգիստ քուն և թէ հոգու անդորրութիւն. լարած և նեարդային ճնշող դրութիւն մ՚է, որ կը տիրէ մարդիկներուն վրայ։ Ի՞նչ պիտի ըլլայ։ Ոչ ոք ոչինչ գիտէ, կասկածը ամենուն սիրտը նետել կուտայ. ամենքը կըսեն, որ „բան մը կը ըլլայ" և սարսափահամակ կսպասեն այդ ճակատագրական օրուան, երբ նորէն մարդկային արիւնը պիտի ողողէ Պոլսոյ փողոցները։

Ճակատագրական օրը Բամազանի 15-ը կը համարւի։ Այդ օրը Ոճրագործ-խալիֆան պիտի գնայ Մուհամէտի ուղտի ստէպ շինուած վերարկուն համբուրելու։ Կը խօսին հայ յեղափոխականներու ռումբերու և „Երիտասարդ Թիւրքիայի" մասին. հաւատացած են, որ ատոնց կողմէն սպանութեան փորձ մը պիտի ըլլայ Զարագործի սև կեանքի դէմ. և եթէ տեղի ունենայ, յաջող կամ՝ անյաջող, սարսափելի կոտորած ըլլալու է։ Ոմանք ալ կը կարծեն՝ թէ կառավարութիւնը ինքը այդպիսի դժոխային ծրագիր մը սարքած ըլլալու է կոտորած առաջ բերելու համար։ Ատ է միակ միջոցը իր հակառակորդներուն դէմ կուելու համար. այդ ճանապարհէն չի շեղիր, քանի որ անպատիժ կը մնայ քոստ հրէշը։

Նոր կոտորածի երկիւղը այն աստիճան լուրջ բնաւորութիւն է առեր, որ նոյն իսկ դեսպանները կըզբաղին ատով, և մինչև իսկ ռուսական դեսպանը միջամտեր ու կառավարութեան ուշադրութիւնն է հրաւիրեր։

Ինչ ալ ըլլայ, կառավարութիւնը շան պէս կը դողայ յեղափոխականներէն, իսկ ժողովուրդը երկուքէն ալ։ Կառավարութիւնը այն աստիճան կը վախնայ, որ Պոլիսը զինուորական դրութեան մէջ է դրեր։ Փողոցներուն մէջ դուք աւելի կը պատահիք զինուորներու, ոստիկաններու, ժանդարմներու և այլն, քան թէ գործի տէր մարդոց. բացի այն, իւրաքանչիւր փողոց և անկիւն ունի իր ոստիկան զինուորը, քաղաքին մէջ կը պտտին խումբ-խումբ՝ թէ հետևակ և թէ ձիաւոր զօրքեր։

***

Փետրուար 14-ին (ն. տ.).—Ճակատագրական օրը կը մնտենայ։ Մարդոց սրտերը կուռին և կը տրոփեն։ Ամեն կողմէ կը լսի՝ „Ա՞խ, ե՞րբ պէտք է անցնի այդ անիծած օրը, այս անգամ՝ ալ ազատո՞ւմ"։ Թիւրք, հայ, յոյն, եւրոպացի սաստիկ վրդովման մէջ են։ Ամեն մարդ իրարու կը հարցնէ.

—Վաղը խանութ պիտի բանա՞ս։

—Ձեմ գիտեր, եղբայր, կըսեն թէ վաղը (սուլթանը) վար պիտի առնեն. խանութ բանաս էշնահատակ կըլլաս, չի բանաս, երկրորդ օրը բանտն ես. մարդ ի՜նչ ընելը շուարած է։ Ընդհանուր յեղափոխութիւն կայ, ամեն մարդ ապահով տեղեր կապաստանի, Բերա կամ կղզի կը դիմեն առհասարակ“։

Հասարակութեան երկիւղը լուրջ բնաւորութիւն առաւ, երբ կառավարութիւնը յաջողեցաւ ձեռք անցնել մեր թագստոցներէն մէկը, ուր կային ռումբեր։ Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ և սարսափ սփռեց։ Ջլատուած կարծուած յեղափոխական մարմինը իր բոլոր ուժով վերակենդանացաւ հանրութեան առջև. չէ՛, ատոնք չեն մեռած և չեն մեռնիր, ատոնք այն տեսակ մարդիկ են, որ իրենց որսը ձեռքէ չեն թողուր, մինչև զայն չոչնչացնեն, կըսէ հասարակութիւնը և սարսափահար կսպասէ չարագուշակ օրուան։

Այդ սարսափին ուժ տուին և „Երիտասարդ Թիւրքիային“ դեսպաններուն ուղարկած շրջաբերականը և փողոցներուն մէջ ցրուած յայտարարութիւնները, որով հրաւէր կը կարդացուէր տաճիկ ժողովրդին, դուրս գալ սպասողական անշարժ դրութենէն և հետևիլ հայ յեղափոխականներուն միջոցին։

Եւ անոնք, որ ստիպուած են շուկայ ելլել և հնարաւորութիւն չունին սենեկի մէջ փակուելու, ապահով չեն կենդանի տուն վերադառնալու։ Հարկ չկայ այդ մարդկանց հետ խօսելու. անոնց ներքինը հասկնալու համար, բաւ է նայիլ անոնց գունատ և տխուր դէմքերուն, մարած աչքերուն, որոնք արագ-արագ դէս ու դէն կը նային, թէ արդեօք իրեն չե՞ն խփեր, թէ միգուցէ անակնկալ հարուած մը զինքը գետին փռէ։ Կը նայիք ատոնց, այդ կենդանի ուրուականներուն և կը խղճաք . . .

Կայր ոստիկանութիւնը աչալուրջ հսկողութիւն ի գործ դնել կը ջանայ, հայ կամ թիւրք կասկածելի բոլոր մարդիկ աջուձախ ձերբակալելով։

Պէշիկթաշէն մինչև Կիւլհանէ տուները, վաճառատուները հսկողութեան տակ են։ Սուլթանի անցնելիք ճամբուն վրայ եղող բոլոր բնակարաններուն տիրոջ պատուիրուած է չորեքշաբթի օր օտար հանդիսատեսներ չընդունիլ. երկրորդ, երրորդ յարկի պատուհաններէն չը դիտել։ Բռնապետութեան ականջին մէջ դեռ կը գոռայ Դաշնակցական հերոսներուն ռումբերը և կը դողայ բռնակալը ու իր ամբողջ աւազակախումբը . . .

„Ուր հալածում, անդ տարածում“-ը կէտ առ կէտ արմատներ ձգած է շնորհիւ Համիտի վայրագ բռնութեան. հայ յեղափոխականը չի կրնար զսպել իր ուրախութիւնը, երբ իր ցանած սերմերուն աճիլը և ուռճանալը կը տեսնէ։

Թիւրք հայրենակիցներու դժգոհութիւնը չափազանց է։ „Մէճլիսի մէպուսանի“ (երեսփոխանական ժողով) խօսքը ամենատգէտ թիւրքին բերանն է այժմ և կը կարծեն թէ այդ ժողովը՝ ամեն չարիքներու վերջ պիտի տայ։ Այդ հաւատքն ալ բաւ է։ Բայց շնորհքով կազմակերպութեան պակասութիւնը և իրենց բուռն եռանդը, զոր ամլո թեան կը դատապարտէ ցաւալի անփորձառութիւն մը, պատճառ կըլլան խմբերով ձերբակալուելուն։ Ձերբակալուածները կաքսորուին հեռաւոր վայրեր, թէև իրենք կըսեն թէ ծովը կը նետուին։ Համիտէն ամեն բան կը յուսացուի։ Հիմա հայ մայրերուն հետ տաճիկ մայրերն ալ կուլան իրենց սիրասուն զաւակներու կորուստը, և հայ կիներու անէծքին կը միանայ տաճիկ կիներու անէծքը և վրէժխնդրութեան ճիչը մարդախողող գազանին դէմ։

***

17-ին փետր. (Ն. տ.)։—Ճակատագրական օրն է։ Փողոցներուն մէջ մեռելութիւն կը տիրէ. Պոլսոյ կողմը խանութները գոց են։ Ճամբուն երկայնքը երկու կողմէն զինուորական կուռ շղթաներով կապուած է և երթևեկութիւնը կանգ առած։ Զինուորներ ու շներ կան մէջտեղը։ Ժամ 11-ին պալատական կառքերով հարեմական անվերջանալի մեծաշուք թափօրն է, որ կանցնի. իսկ սուլթանը . . . օ՜հ, վատը ծովով գացեր է, ծովով ալ վերադարձեր։

Սովորութիւն է, երբ սուլթան մը ծովային փոքր կամ մեծ ճամբորդութիւն մը կատարէ՝ թնդանօթի 101 հարուածներ կարձակուին. այդ ալ չեղաւ։ Սակաւաթիւ ամբոխը, որ հեռուէն աչաբեկ կը դիտէր, տեսնելով խայտառակութեան լրումը, քթին տակէն ժպտելով ցրուեցաւ։

Համիտը այնքան ստոր, այնքան ցածհոգի արարած մ'է, որուն սրտին մէջ ընտանեսիրութեան զ գ ա ց ո ւ մ ն իսկ չկայ։ Հոն, ուր իրեն համար վտանգ կայ, իր ընտանիքը կը ղրկէ մեծ շքով, որպէսզի յեղափոխականները իրենց նպատակին մէջ խաբուելով՝ ի դերև ելլեն։

Օրը հանդարտ անցաւ։

Այս ընդհանուր սարսափին մէջ, միայն յեղափոխականն է, որ հանգիստ սրտով, հեգնական ժպիտով կը նայի այդ տեսարանին վրայ. ան կզգայ իր ոյժը, կը տեսնէ, որ այդ սարսափը իր հարուածներու հետևանքն է, որ իսկապէս ան է այսօր երկրի դրութեան տէրը։ Յեղափոխականը կը տեսնէ, որ կառավարութիւնը կը սոսկայ իրմէ և կզգայ թէ ներկայ կացութեան բանալին իր ձեռքն է, որ ինքը կարող է տակնուվրայ ընել ոչ միայն Պոլիսը, այլև ամբողջ Եւրոպան. որովհետև Եւրոպայի խաղաղութիւնը կապուած է ներկայիս մէջ, Օսմանեան կառավարութեան գոյութեան ու խաղաղութեան հետ։ Կրետէի դէպքը չի շւարեցներ զայն։ Եւ երբ յեղափոխութիւնը իր ափին մէջ կը կրէ արևելեան խնդրի բանալին, անիկա րոպէ մը չի յուսահատիր և ոչ ալ կը նահանջէ. ապագան իրենն է և միշտ առաջ կընթանայ . . .

***

Յ. Գ.—Տէլի-Ֆուադ փաշան, որ տաճիկներուն մէջ անկեղծ մարդու համբաւ կը վայելէ՝ փախած է։

—Բարեկենդանի մօտենալուն առթիւ կառավարութեան կողմէն եւրոպացիներուն, յոյներուն, հայերուն յայտարարութիւններ կըլլուին, որ պարահանդէսներ տան, ուրախութիւններ ընեն և խրախճանքներ կազմեն, մոռացնելու համար ժողովրդին կրած սարսափները . . .

Կրետէի համար նոր սուտեր շատ. տաճիկները կատղած են, բայց ի՞նչ օգուտ, խածնելու ակռայ չունին . . .

—Զմիւռնիայում՝ յոյն թէ տաճիկ սաստիկ գրգռուած են։ Երկու կողմն ալ մեծ եռանդով զէնքի պատրաստութեան մէջ են։ Վալիի հրամանաւ ժամը 6-էն սկսեալ բոլոր սրճարանները ու գինետունները պիտի գոցեն։

—Դեսպանները կը գումարուին ու կը գումարուին, սպասե՛լ և յուսա՛լ. ո՛չ կռուել և յուսալ . . .

ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԻՑ

18/30 յունուար 97 թ.

Սուլթանին կառավարութեան բարոյական քայքայումը, որքան որ հսկայական քայլեր կընէ, անիշխանութիւնը նրա մէջ այսօր առաւել քան երբեք զգալի է։ Նրա աներես պաշտօնեայքը առաւել քան հայն՝ յուսակտուր դարձեր են իրենց ապագայի մասին։ Նրանք այլևս չեն խորհիր այդ խարխլուն վեթխարի շէնքին տալ մի որ և է նորոգութիւն, խորապէս համոզուելով մի անգամ ընդ միշտ՝ թէ նա դատապարտուել է սոսկալի և խայտառակ կործանման մը։ Ուստի այժմ նրանք անկուշտ տզրուկների պէս հայու արիւնը ընդ երկար ծծելուց յետոյ՝ էլ իրենց աչքերը դարձրել են նիւթապէս բոլորովին փճացած հայէն դէպի վերջին աւարառութիւններով պարարտացած քրտուն։ Կառավարութիւնն ինքն էր, որ հրաման տուեց վայրագ քրտուն ուրթալ սպաննել, աւերել, այրել ու քանդել ինչ որ սեփական է հայուն. իսկ այժմ՝ էլ ելեր. հաշիւ կը պահանջէ նրանից այդ դժոխային գործոց համար։ Գաղտնի կը բերէ քրտերից իր մօտ, սպառնալիքներ կը տեղացնի անոր գլխուն և վայն ալ կեղեքելէն ետքը միայն ազատ կը թողու և այսպէս կողոպտուած հայուն հարստութիւնը հետզհետէ կը հաւաքուի սուլթանին անիրաւ կառավարութեան ընչաքաղց պաշտօնեաների մօտ, որոնք մեծ փոյթ գործ կը դնեն տեղաւորելու եւրոպական մի որ և է պանքում։ Մռայլ ապագայի մասին ի գործ դրուած սոյն նախահոգ հեռատեսութեան օրինակը կուգայ շատ վերէն, ո՛չ այլապէն սուլթանն ինքն ալ նոյնը կընէ իր այնքան անիրաւութեամբ չորթած առասպելական գումարների վերաբերմամբ. հոգ չէ՝ թէ անդին պետական գանձարանում մկները մեծ դատարկութեան մը մէջ ճիրիտ կը խաղան։ Այս դատարկութիւնը սուլթանը թէև կաշխատէ լցնել մասամբ իր նախագահութեան ներքոյ բացուած վերջին հանգանակութեամբ, սակայն դժուար թէ ամբողջովին յաջողի նա այդ գործում, զի հանգանակութիւնը պիտի կատարուի աւելի իսլամ՝ ժողովրդից և սա ընդունակ չէ ամենևին հայրենասիրական բարձր զգացումների։ Նա չի զգար իր հայրենիքին սպառնացող աղէտքին վտանգը, և այդ վտանգի առջև պահանջուած ո՛չ անձնուիրութիւնը ունի, և ո՛չ ալ զոհողութիւնը։ Սուլթանը եթէ այս կէտում չէ կարող գտնել ամբողջական յաջողութիւն, կը յաջողի սակայն մի այլ բանում։ Նա այս առիթով կը յայտարարի։ — „Հանգանակութեան մասնակցող հայը հաւատարմութեան զօրաւոր ապացոյց մը տուած պիտի ըլլայ սուլթանին“։ — Այլևս ո՞ր հայը պիտի յանդգնի բաց մնալ հանգանակութեան գործէն, որը պարզ ապստամբական ցոյց պիտի նկատուի կայսերական կառավարութեան դէմ։ Տեղւոյս կառավարիչի յատուկ ազդարարութեամբը օրերումս ազգային իշխանութիւնը ստիպուեց աղերսագիր մատուցանել և խնդրել կառավարութենէն, որ արտօնութիւն տրուի իրենց ևս մասնակցելու այդ ազնիւ հանգանակութեան գործին։ Կառավարիչը սիրով ընդունեց հայոց խնդիրքը և շատ ուրախ մնաց իր այս յաջողութեան վրայ, որը առժամայն հեռագրեց Բ. Դրան։ Միևնոյն փլանը ի գործ դրուած է և այլ հայաբնակ գաւառներում և գաւառացի հայը ներկայ փափուկ հանգամանքներում հարկադրուած է կամայ ակամայ համակերպիլ և գլուխ ծռել կառավարութեան այս նենգամիտ պահանջքին։

Նախորդ յօդուածովս արդէն տեղեկացրի ձեզ ակնցի տարաբախտ Ճանիկի ողբալի մահը, ինչպէս նաև այն սպանութեան փորձը, զոր կատարեց թիւրք սրիկայ մը, խնձորեկցի Անտօն անուն հայ երիտասարդի մը վրայ։ Այսօրինակ եղերական գործեր կը շարունակուին շնորհիւ այն անիշխանական դրութեան, զոր կառավարութիւնը ի գործ կը դնէ ամենայն պաղարիւնութեամբ։ Օրերումս հայ երիտասարդ մը Ագրակ գիւղից դաշունահար ինկաւ Ուռիկ գիւղացի մի թիւրք սրիկայից։ Ուրիշ թիւրք մը սրիկայ ալ Մեղացիք գիւղում հայու մը տան մէջ զէնք կը պարպէ և տան բնակիչները կը սարսափեցնէ, խեղճ հայերուն անհնար է դարձած իրիկուայ արևմուտից յետոյ տանը դռնից դուրս ոտք դնել և իր հարևանների հետ յարաբերիլ։

Դիկկիրեկ-Բլուր գիւղէն ուրիշ երկու թիւրք սրիկաներ դարանուած Հոռամ-Ագրակ գիւղի այգեստաններու մէջ՝ կը յարձակուին երկու հայերու վրայ (մինը պատանի) և կուզեն առևանգել մի մանկամարդ հայ կին, զոր նրանք (հարսին տագրը և եղբայրը) կը փոխադրէին Հոռամ-Ագրակից (ծննդական տնից) Մէզրէ՝ իր ամուսնուն տունը։ Հայ կտրիճները թէև անզէն՝ մեծ քաջութեամբ կը դիմադրեն, և դժբաղդաբար, երկուքն ալ դաշոյնի հարուածներով ծանրապէս կը վիրաւորուին։ Կռուի միջոցին հարսը բլուրի մը գագաթ կը վազէ՝ բոլոր ձայնով հաւար կը կանչէ։ Բարեբաղդաբար իսկոյն օգնութեան դիմողներ կը լինին, որոնց շնորհիւ վերահաս վտանգից կազատուի հարսը։ Չարագործները խոյս կը տան, վիրաւոր երիտասարդները կը փոխադրեն գիւղը. մինը մահամերձ վիճակի մէջ ինկած։ Դառն վէճը, սարսափ և յուսահատութիւն միանգամայն կը պատճառէ այս վատ դրութեան անպաշտպան հայերուն, որոնք անձնապաշտպանութեան ամեն միջոցներէ զուրկ են։

ՓԻԴԱՅԻ

(ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ)

Անիրաւութեան ու բռնութեան դէմ բողոքող ժողովուրդների մէջ, նախ քան ընդհանուր կռիւը, ապստամբութիւնը, յայտնւում են անհատներ, որ մարմնացնում են տիրող գաղափարները, ներկայացնում են, որպէս ընդհանուր բողոքի ոգին։ Բոսնիայի ուսկոկները, Յունաստանի կլեֆտները, Բուլղարիայի հայդուկները եղան նրանց ազատութեան կարապետները։ Նրանք էին որ կազմակերպեցին և ընդհանրացրին ապստամբութիւնը իրենց օրինակով։

Այսօր էլ հայ ֆիդային է իւր ժողովրդի արդար

բողքի մարմնացումը։ Նրա կեանքը կռիւ է ընդդէմ անողոք բռնակալութեան, կռիւ ի վրէժ հարիւր հազարաւոր անմեղ զոհերի։ Հեռացած իր ընտանեական յարկից, ուրացած անդորրաւէտ, հեշտալի կեանքը, նա թափառում է աստ անդ, փնտռում է կռիւ և արկած։— Երբ գտնում է մարտը, թնդում են լեռները հրազենուց ահեղասաստ բոմբիւններից, երբ ահաբեկ, նկուն թշնամիք փախուստ են տալիս, եռ է գալիս նրա սիրտը, և ցնծում է նա, որպէս պատերազմի աստուած, որ միայն այս գոռ, արհաւրալից հանդիսում կարող է խանդ ու հաճոյք զգալ։ Ընկնել ղէն ի ձեռին թշնամու արիւնը թափելիս, ահա այս է նրա ցանկալի մահը։

Ֆիդային, որի ախրագործութիւնները հռչակ են ըստացել, և որ պաշտպանել է շաւերի կեանքն ու ինչքը, հայ ժողովրդին՝ հիացման հրեշտակ է, իսկ թշնամուն՝ սարսափելի ազգայէր։ Հայը գովում, փառաւորում է իր ֆիդային, հիւրընկալում և առաջնորդում է նրան. բանաստեղծները երգեր հիւսելով՝ պատմում են նրա նախճիրները, ոգևորում ժողովուրդը և յորդորում քաջերին, որ դառնան ֆիդայի՝ կռիւ մղելու բռնակալի դէմ։ Իսկ թշնամին, որ ունի ահագին ոյժ, մեծ բանակներ, որ մորթում, կոտորում է հազարաւոր անմեղներ, և որ խրոխտում է հզօր պետութիւնների առաջ,—վախենում է ֆիդայից։ Իր ահեղ զօրութեամբ, իր քանդիչ թնդանօթներով չկարողանալով սարսափեցնել և ընկճել նրանց՝ գերբնական զօրութիւն է ընծայում նրանց։ Մի տեղ յայտնուել են ֆիդայիներ, այդ անըմբռնելի, անմահ էակները, ինչպէս համարում են նրանց, այնտեղ թշնամիները հանդիստ չեն կարող քնել երկիւղից. քիւրտ գիւղերում նրանց գալը լսելիս, առհասարակ շտապում են փախչել լաց ու կոծով։ Տեղ տեղ քիւրտերը երգեր յօրինելով մեր ֆիդայիների վրայ՝ գովում են նրանց քաջութիւնը, վեհանձնութիւնը և զէնքերի կատարելութիւնը։

Որքան փառաւոր, այնքան էլ փոթորկալի է սակայն ֆիդայական կեանքը։ Չունի նա երբէք հանգստութիւն. ոչ գիշեր, ոչ ցերեկ. ոչ գիւղերում, ոչ քաղաքներում, ոչ սարերում, ոչ ձորերում։ Ենթակայ է նա միշտ ցրտի, քաղցի, ծարաւի. իւրաքանչիւր րոպէ սպասում է նրան թշնամու գնդակը կամ բանտը իր դըժոխային տանջանքներով։ Շատ անգամ բարբարոս կառավարութիւնը բնաջինջ կոտորած սպառնալով նրան հիւրընկալող քաղաքին կամ գիւղին, տաժանելի դըժուարութիւնների է մատնում նրան։—Սարկացած, անբարոյական ամբոխը, քծնող, փոփոխամիտ աղաները, որ առաջ դրւատում էին քաջ ֆիդայիին, նրան էին պարտական իրենց կեանքն ու ստացածքը, մահւան սարսափի աւերիչ ազդեցութեան ներքոյ, սկսում են դատապարտել նրան, սրիկայ, աւազակ, մարդասպան կոչել և . . . մատնել։ Ֆիդային մնում է միայնակ իր զայրոյթի և կատաղութեան մէջ. նա դառնութեամբ տեսնում է՝ թէ ի՜նչպէս իր ազգն էլ միացած է թշնամու հետ իր դէմ։ Բայց նա համբերատար է և ներող. նա արդէն կատարեալ համակամութեամբ մտել է այս փշալից ասպարէզը, փառաւոր ապագայի անվրէպ յաղթանակի յուսով։ Գալիս է զօրքը մատնիչների առաջնորդութեամբ. որոտում՝ են թնդանօթները, կռիւը բուռն է. ֆիդայիները, անվրդով և արի, ոգևորուած մի երկնային աւիւնով, և՛ երգում են, և՛ մարտնչում։ Թշնամին զայրագնած, կրկնապատկում՝ է իր ոյժը, բայց ի զուր. ֆիդայիները, փռելով վախկոտ զինուորների դիակները, անցնում են խրոխտ և անյաղթ։ Ահա նրանք մի այլ տեղ պաշարուած քիւրտ և թիւրք զօրաց բանակով։ Դարձեալ կռիւ անհնարին։ Նրանք հրաշք են գործում. նորից պատռելով թշնամու գունդը՝ անցնում՝ անյայտանում՝ են ի հիացում և ի սոսկում անարգ ոսոխներին։

Թող արեան ծարաւի բռնակալը շարունակէ իր կործանարար գործը, թող անմեղ հայ ժողովրդի արիւնով ողողէ մեր հայրենիքը, թող բազմապատկէ նա իր փոքրասիրտ զօրքերը և գրգռէ իր գազանական. խուժանը, հայ ֆիդային էլ կը շարունակի իր սուրբ կռիւը, որ աւելի և աւելի մեծ ծաւալ է ստանում. դժգոհների, վրէժխնդիրների և անձնուրաց գաղափարականների թիւը ստւարացել է արդէն։ Ֆիդայական բազմաթիւ խումբեր, մղելով անընդհատ կռիւ, կարող են կործանիչ հարուած տալ սուլթանի զօրութեան։ Հայ շաղակրատ դիպլոմատների ճառերը, մարդասէրների ճոռոմաբանութիւնները չեն կարող փրկել քեզ, այլ միայն քո ոյժը։ Կը բացի գարուն, բնութիւնը յարութիւն կառնէ, դու էլ կենդանութիւն ստացի՛ր, ոչինչ չեն թողել քեզ խաղաղ ապրելու համար. մերկ ու սոված տանջւելով մեռնելու փոխարէն, սկսէ պատուով մեռնել։ Եղի՛ր ֆիդայի. զէնք չի պակասիլ քեզ, եթէ փնտռես այն, ինչպէս հաց՝ ապրելու համար . . .

Շարժւի՛ր ֆիդայի, պարզի՛ր քո յեղափոխական դրօշը և հայ ժողովուրդը քո հետն է . . .

ՕԳՈՍՏՈՍ 14-Ի ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

(Օսմանեան բանկի մէջ վիրաւորուածների պատմութիւնը)

—

Երբ մի քուռն յեղափոխականների եւ Մաքսիմովի մէջ բանակցութիւնները վերջացան, երբ մեր երկու առաջնորդները՝ Արմէն-Գաբրօն եւ Հրաչը, եւ մեր 15 քաջ ընկերները դուրս եկան իրը յաղթական հերոսներ, ատրճանակները ձեռքերին ու անցան սուլթանական ապուշ զօրքերի զինապատ շղթաների միջով, մենք՝ վեց վիրաւորներս մնացինք մի քանի րոպէ պանք Օթթոմանի մէջ։ Մենք վեց հոգի էինք։ Մեզանից մէկի ձեռքը բոլորովին կտրուած ընկած էր եւ երեսը ամբողջովին լցւած ռումբի կտորներով, երկրորդի ոտի ոսկորը ջախջախուած, իսկ մնացած չորսս դեռ կարողանում էինք, ոտներից ու թեւերից վիրաւորուած, օգնել մեր ընկերներին, հսկել մեզ յանձնած կէտերի վրայ, մահաբեր ռումբերը ձեռքերիս պատրաստ։

Մեր 17 ընկերների դուրս գալուց անմիջապէս յետոյ ներս մտան

տաճիկ զինուորները, մարթինները ձեռքերին եւ սկսեցին մեզ դուրս տանել քանկից: Նրանք բռնում էին իրար ձեռք, վիրաւորներիս նըստեցնում իրենց ձեռքերի վրայ, հրամայում, որ մենք բռնենք իրենց ուսերից՝ վայր չընկնելու համար՝ եւ հանում դուրս, նստեցնում մեզ համար բերուած 3 կառքերի մէջ:

Մեզանից մէկի ոտի ոսկորը փշրուած լինելով՝ բարձրացնելու ժամանակ ցաւից ալոռաց: Այդ առթիւ ծագեց մի կռիւ երկու թիւրք զինուորների մէջ: Մէկը մեղադրում էր միւսին եւ փողոցային հայհոյանքներ թափում գլխին, որ „մարդավարի չի վերցնում հիւանդին ու ցաւ է պատճառում նրան“:

Ինչ որ է, բոլորիս էլ նստեցրին կառքերի մէջ: Երկու կառքերի մէջ տեղաւորեցին 5 թեթեւ վիրաւորուածներիս, իսկ մի կառքի մէջ ծանր վիրաւորին, որ հիւանդանոց համնելուն պէս՝ հոգին աւանդեց...

Մեր կառքերի վրայ նստած էին մի մի տաճիկ զինուոր եւ մի մի ռուսական դեսպանատան դաւազ: Իսկ բոլորիս վրայ հսկում էր մի տաճիկ հարիւրապետ:

Կառապանները կարծում էին, որ մեզ տանում են ուղիղ դէպի Գալաթա-Սարայի կեդրոնական բանտը եւ ձիերը դարձնում էին դէպի այն կողմը: Դաւազները հրամայեցին քշել հիւանդանոց:

Հասանք: Բոլորիս ներս տարան: Իսկոյն վերքերնիս լւացին, դեղեր դրին ու պառկեցրին մի առանձին սենեակում: Այդ օրւանից մենք այլեւս ընկանք ռուսական դեսպանատան հովանաւորութեան տակ: Տաճիկ հարիւրապետը հարցնում էր մեր որտեղացի լինելը, մեր անունները, իսկ մենք ծաղրում էինք նրան եւ մերժում պատասխանել:

Անցաւ երեք օր եւ ահա փառաւորապէս գալիս է սուլթանի կողմից մի թիւրք բժիշկ. „ես պէտք է նայեմ, խնամեմ հայ վիրաւորներին“: Հիւանդանոցի պետն ամենախիստ եւ կտրուկ կերպով մերժում է նրա առաջարկը եւ ոտն անգամ ներս չի թողնում դնել հիւանդանոցի մէջ: Այս միջադէպի վրայ ռուսական հիւպատոսը ուղարկում է հիւանդանոցի պաշտպանութեան համար 10 զինուոր:

Երբ բժշկական օգնութիւնը մերժւում է, սուլթանի աղէտս կառավարութիւնը դիմում է մի այլ միջոցի: Մի գեղեցիկ օր՝ պալատի նաւէրներից մէկը, ետեւը ծզած մի քանի ծառաներ, ձեռքերին մեծ-մեծ ամաններով կերակուրներ, գալիս ցցւում են հիւանդանոցի դրանը եւ յայտնում սուլթանի կամքը. „Ես ուզում եմ իմ հպատակ վիրաւորներին կերակուր բաժանել, սնունդ մատակարարել“... Այո՛. այդ է բռնակալի վերջին միջոցը: Երբ ուրիշ հնար չի մնում, թոյն է ասպարէզ գալիս: Ինչ ասել կուզէ, որ այդ կերակուրը եւս մերժւում է:

Այս դէպքի վրայ հիւանդանոցի պահապանների թիւը 10-ից բարձրանում է 25-ի, որոնք ցերեկ-գիշեր հսկում են շինութեան վրայ, կասկածելով յանկարծակի յարձակում կրելուց:

Հիւանդանոցի մէջ ամեն բան ընթանում էր շատ գոհացուցիչ կերպով: Քանի դեռ տաճիկ կառավարութեան կերակուրները չէին եկած, մեզ այցելութեան էին գալիս մեր ծանօթները, իսկ երբ այդ դէպքը պատահեց, այն ժամանակ, վախենալով որ եւ է անակնկալ պատահարից, արգելեցաւ ամեն մարդու մուտքը մեզ մօտ: Մենք այլ եւս կտրւեցանք արտաքին աշխարհից:

„Կարմիր Խաչի“ ողորմած քոյրերի եւ հիւանդանոցի բժիշկների վարմունքը մեզ հետ շատ մարդասիրական եւ գովելի էր: Ցաւի սաստկացած ժամանակը ամեն միջոց գործ էր դրւում մեզ հանգըստացնելու համար: Տալիս էին այն ամենը, ինչ որ մենք էինք ցանկանում ուտել: Յաճախ այցելութեան էին գալիս հիւպատոսը, նրա օգնականը եւ այլ պաշտօնական անձինք ու մեզ հարցնում. „առողջանալուց յետոյ նորէն երթալո՞ւ էք կռւի մէջ“: Երբ մենք պատասխանում էինք՝ այո, նրանք խրատներ էին կարդում մեզ՝ հեռու մնալ, զգոյշ լինել այդ տեսակ „յիմար բաներից“ եւ այլն: Այս ամենը կատարւում էր կամ թիւրքերէն լեզւով կամ թարգմանի միջոցով, որովհետեւ մեզանից եւ ոչ մէկը մի բառ գիտէր ռուսերէն:

5 վիրաւորներից երեքս արդէն լաւացել էինք, երբ Նելիդովը կատարեց իր վերջին այցելութիւնը Պետերբուրգ եւ յետ դարձաւ: Վերադառնալուց մի քանի օր յետոյ՝ մարդ է գնում նրա մօտ եւ տանում սուլթանի թուղթը, որով պահանջում էր մեզ, „ոճրագործ-աւազակներիս“ յանձնել ա ր դ ա ր ո ւ թ ե ա ն ձեռքը, որ պատժէ: Երբ այս պահանջը մերժւում է, այն ժամանակ Թիւրք կառավարութիւնը մեզ պահանջում է, ասելով՝ որ „ժողովուրդը գրգռուած է, ուզում է“ եւ այլն: Այս բանի վրայ հիւանդանոցի պահապանների թիւը նորէն կրկնապատկւում է եւ հրաման տրւում գնդակահար անել հիւանդանոցի դռնից առանց իրաւունքի ներս մտնող բոլոր անհատներին:

3-4 օր ետքը մեզ, 3 առողջացածներիս համար գնում են մի-մի ձեռք նոր շորեր, կօշիկներ, գլխարկներ, մի-մի ձեռք սպիտակեղէն եւ յայտնում, որ ձեզ ուղարկելու ենք ձ ե ր ը ն կ ե ր ն ե ր ի մ օ տ: Մենք ուրախանում ենք: Փակ կառքով եւ դաւազներով տանում են մեզ ուղիղ նաւահանգիստ, հանում ռուսական „Չօրգա“ նաւի վրայ եւ տեղափոխում Պիրէա: Այսուհետեւ մենք ազատ ենք:

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

Արեւելեան յաւիտենական հարցը միշտ անթառամ է: Այսքան պոռչտուքները, իրարանցումները բանի մը չի ծառայեցին: Եւ երբէք խօսքը գործի չի փոխւեցաւ:

Արեւելքի ժողովուրդները անբախտ են. զի այդ հարցը այնպիսի վեհապետներու օրով ծագեցաւ, որոնց բոլորն ալ բարոյա-ֆիզիկական դարաւոր այլասերման վերջին թափթփուքներն են: „Մենքն ալ Լօմպրօզօի“ մարդաբանական հետազօտութեան վայել: Երբ արհինարցունք թափող ժողովուրդները գթութեան ձեռք խնդրեցին, բոլոր մեծ տէրութիւնները մէկ եղան եւ պաշտպանեցին Եըլտըզի բորենին: Ճակատագրի դժբախտութիւններ են ասոնք: Ֆրանսան իսկ, այդ մարդկային ազատագրութեան հնոցը, պապանձեցաւ եւ խորթ գոյի մէջ խցեց իր ականջները:

Մինչեւ այժմ Ֆրանսա արեւելեան հարցի մասին մունջ կը մնար, Ցարի գահին առջեւ բերանը բռնուած էր: Վերջերս քաջութիւն ունեցաւ „Դեղին գրքոյկ“ մը հրատարակել, որ կը բովանդակէ Ֆրանսայի չորս տարի է իվեր արեւելեան հարցի մասին բռնած աշխարհավարութիւնը: Այդ „Դեղին գրքոյկը“ մերթ քօղի տակէ մերթ յայտնի կը ցուցնէ ռուս եւ գերման կառավարութեանց խաղցած դաւերը եւ Ֆրանսական կառավարութեան դերը:

Ֆրանսայի խորհրդարանին մէջ „Դեղին գրքոյկը“ տեղի տուաւ զայրագին հարցաքննութիւններու. Միլլրան անողոք տրամաբանութեամբ Հանօթօի երեսին նետեց այդ գրքոյկի մէջի հակասութիւնները եւ Ֆրանսական նախարարութեան թոյլ ու երկսայրի դիրքը: Այդ գրքոյկին մէջ ի վեր կ'ելլէ նաեւ Գամպօնի, Պոլսոյ դեսպանին, անաչառ եւ կորովի վարմունքը:

Քանի մը նմոյշներ.

Գամպօն կը հեռագրէ Հանօթօին՝ թէ սուլթանը իր խոստումները պահելու հակամէտ չէ. զի եւրոպական սերտ համաձայնութեան վըրայ հաւատք չունի . . . եւայլն: Հանօթօն հակառակը կը հաւատայ:

Ուրիշ անգամ կը հեռագրէ. „Կրետէի հարցը կարգադրուած է. զի սուլթանը կը մերժէ՝ թէ ապստամբութիւնը երկարելով, տէրութեանց միջամտութեան տեղի կուտայ. բայց հայկական գործը կը ծգձգէ, զի սուլթանը այդ մասին եւրոպական միջամտութեան չի հաւատար“:

Ուրիշ հեռագրի մը մէջ Գամպօն իրաց վիճակին ծգձգելուն համար յոռետես գուշակութիւններ կ'ընէ եւ եւրոպական ազդու ճընշում կը պահանջէ սուլթանի դէմ:

Նոյնպէս կը խնդրէ Հանօթօէն, որ Բարիզի տաճկաց դեսպանին ծանուցագրերուն հաւատ չընծայէ, որոնք պարզապէս Եւրոպայի աչքը կապելու համար են:

Ուրիշ տեղ մը կը հեռագրէ՝ „Բարենորոգումներու անկեղծ գործադրութիւնը Թիւրքիոյ ուժէն ի վեր է եւ նոյն իսկ իր աւանդութեան հակառակ“:

Երբ Գամպօն այսպէս անաչառ եւ վճռողապէս կը խօսի, Հանօթօն հակառակ կերպով կը մտնէ, կարծես իրարու լեզւէ չեն հասկնար, կամ՝ ըստ Միլլրանի՝ „խուլերու խօսակցութիւն մ'է“: Գամպօն կըսէ՝ Թիւրքիան չի բարեկարգուիր, Հանօթօն կը հաւատայ՝ թէ կը բարեկարգուի եւայլն:

Ժօրէս խօսեցաւ հուժկու լեզւով եւ աւելցուց՝ „տէրութեանց բոլոր գործողութիւնները հասկցուցին Թիւրքիոյ ժողովուրդներուն՝ թէ առանց յեղափոխութեան ոչինչ կարելի է յուսալ Եւրոպայէն“:

„Դեղին գրքոյկէն“ կը հետեւցուի՝ թէ երբ Գամպօն Պոլսոյ մէջ Վիշնուի դերը կը կատարէր, Նելիտօֆ Սիվայի դերը կը խաղար:

***

Թիւրքիան գիտակից ինքնասպանութեան վիճակին հասած է. մէյմը ակռան մարդկային արիւնի համը առաւ, ալ չի կրնար ակռաժանը զատել: Այժմ Պոլսոյ մէջ սուլթանի հաւատարիմներն են համալ-քիւրտերը, որոնք երկաթագլուխ ճոկմներ պատրաստեր են յոյներուն վրայ յարձակելու համար: Կրետէի հարցը Պոլսոյ մէջ մահմետական մոլեռանդութիւնը ոտք հանած է նորէն եւ յոյներէն անթիւ ձերբակալումներ կ'ըլլան, որոնք կ'ենթարկուին սոսկալի տանջանքներու:

Երկրին ժողովուրդը ահուդողի մէջ կապրի: Սուլթանի կառավարութիւնը վտարած է այլեւս մարդկային ամեն բարեկրթութիւն. .

Կըսեն՝ թէ սուլթանը իր 10 տարեկան աղջկան ձեռք իր ատըրճանակը տեսնելով, կասկածելով, սպաններ է:

Անատոլիէն վրդովիչ լուրեր կուգան. հալածանք եւ սպանդներ են հայերուն դէմ: վա՜յ այն ժողովրդին, որ ինքնապաշտպանութեան միջոցներ չի խորհիր եւ ծուղակը կիյնայ վատաբար:

ՍՈՒԼԹԱՆ-ՀԱՄԻԴ ԵՒ ԽՐԳԱՅԻ-ՇԵՐԻՖԸ

—

Անզգալի կերպով անցան-գնացին այն երանելի օրերը, երբ Տաճկաստանի պետը, բոլոր հաւատացեալների եւ անհաւատների տէր Սուլթան Համիդ բռնակալը՝ գլուխը բարձր բռնած, իր անսահման ուժի վրայ վստահ՝ համարձակ ընթանում էր դէպի Թօփ-Գափուի պալատը՝ Մեծ Մարգարէի վերարկուի քղանցքը ծնքաչոք համբուրելու։ Մարգարէի խրգայի շնորհքին ու զօրութեան է պարտական ինքնակալ սուլթանը իր անսասան պետութիւնը։

Այս տարուայ դէպքերից սարսափած ու իր պալատում կծկուած բռնաւորը ամէնուր հայհոյանքներ թափելով վերարկուն համբուրելու վտանգաւոր սովորութիւնը մոցնողի գլխին, ոչ մի պայմանով չէր ուզում այս անգամ դուրս գալ պալատից եւ վերարկուի սուրբ շնորհքից օգտուել։ Շատ անքուն գիշերներ Ալլահին գոչեր արեց, որ նա այդ „դառը բաժակը" իրենից հեռացնի կամ չէյխ-իւլ-իսլամին ներշնչի անգութ վերարկուն պալատը ուղարկել. Բայց ի զուր. Ալլահն ու չէյխ-իւլ-իսլամը խուլ մնացին, եւ Համիդ բռնաւորն ստիպուած եղաւ ահ ու դողի մէջ, փողոցներում ազատ պտտող շներին նախանձելով, ծուլով դէպի Թօփ-Գափուն գաղտագողի փախչել։

Ի՞նչ խօսակցութիւն նա ունեցաւ այնտեղ։ Հայհոյե՞ց արդեօք Մեծ Մարգարէին, որ հիւրիներով զբաղուած՝ չի մտածում բնաւ իր դժբախտ տեղապահի մասին, որ թոյլ է տալիս սփռուած գեավուրներին մի ինչ որ „գնտով" զրրդացնել ու սարսափեցնել հաւատացեալների պետի հոգին եւ, բացի այդ, վատ օրինակ լինել նոյն իսկ ուղղափառ հաւատացեալների համար։ Խոստովանե՞ց արդեօք իր մեղքերը, որ կոտորել տուեց մի անգամից բոլոր հայ եւ կրէտացի գեավուրներին, որ հաստատ չմնայ բռնակալների նշանաբանին՝ „միայն դիակները չեն ապստամբում"։ Թէ յոյսը կտրած խրգայի զօրութիւնից, ողբում էր օսմանեան գահի անխուսափելի խորտակումը. Թէ նա երկիւղից պապանձուած՝ ոչինչ չէր մտածում, ոչինչ չէր ասում, որտատրոփ սպասելով ռումբի ահեղ որոտին կամ ատրճանակի պայթումին . . .

Դառն է Համիդի դրութիւնը, խոստովանում ենք։ Սակայն կարող ենք հաւատացնել բազմատանջ Ոճրագործին, որ իր այս տանջանքները վերջինն են լինելու։ Անհաւատների եւ հաւատացեալների ջանքերով ամէն միջոց ձեռք կառնուին, որպէս զի առաջիկայ տարին, ռամազանի տօներին, Դալի Սուլթան Համիդը այս տարուայ սոսկալի տանջանքներին այլեւս չմատնուի։

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐԸ

—

Սուլթանի բռնապետութեան տակ հեծող ազատամիտ ժողովուրդների դէմ յայտարարած սուրբ արշաւանքի մէջ Վիլհելմ կայսրն է, որ իր ձախլիկ մարմնով ամենից շատ վեր վեր է թռչում. դիպլօմատների բարձրացրած աղմուկի մէջ նրա գոռոց գոչիւնն է ականջ ծակում։ Կրէտական շարժման սկզբին, երբ Յունաստանը չանսաց Եւրոպայի խոհեմ խորհրդին, Վիլհելմ կայսրը խռովուած՝ յետ քաշուած էր թւում։ „Երանի այն այգուն, որից արջը կը խռովի" մտածում եւ ուրախանում էին բոլորը։ Բայց դարձեալ լսելի եղաւ այդ արջի մրթմրթոցը, որը շատ շուտով ահեղ գոռոցի փոխուած՝ խլացնում է այսօր բոլոր միւս ձայները։ Վիլհելմ կայսրը, որի պարանոցին կապած շղթայի ծայրը դեռ Բիսմարկի ձեռքին է պահուած, Կրուպպի թնդանօթը գրկած, պտտում է թաթերի վրայ եւ փրփրած բերանով շանթեր արձակում սուլթանի անզօրութիւնը խանգարող ապստամբների դէմ։ Յանուն եւրոպական խաղաղութեան, յանուն իր ֆինանսիստների շահերի, յանուն օսմանեան փթած դիակի ամբողջութեան բիսմարկեան ոգով ապականուած Եւրոպան լռութեամբ պահանջում է մեզանից ու ու հպատակութիւն, անվերջ տանջանքներ, մեր դիակների անթիւ բլուրներ . . .

Վիլհելմ կայսեր ջանքերը գնահատւում են ըստ արժանւոյն. արդէն Պոլսոյ մզկիթներում իմամները աղօթում են նրա թանկագին կեանքի համար։ Պատմութեան մէջ նշանաւոր հետքեր թողնել ցանկացող Վիլհելմը չի հանգչելու ի հարկէ այդ փառքի վրայ։ Երաժիշտ, նկարիչ, բանաստեղծ, ռազմագէտ, ծովագէտ, մօնարխ—րէֆօրմատոր Վիլհելմը ձեռք կը բերի անշուշտ իմամ տիտղոսն եւս։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Եւրոպական մարտանաւերի ռմբակոծումը, ճիշտ է, լռեցրեց Կրետական բաշիբօզուկներին, որոնք յանկարծ տեսան, զարմացան, որ շատ սխալ ու աննպաստ գաղափար են ունեցել եւրոպական քաղաքակրթութեան մասին, ճանաչեցին և սիրով ողջունեցին իրենց եւրոպական գաղափարակիցներին, բայց ոչ մի վհատութիւն չկարողացաւ առաջ բերել ապստամբ կրետացիների բանակում։ Ապստամբները յոյն զօրքի աջակցութեամբ, գրգռուած այդ հարուածից աւելի մեծ եռանդով շարունակեցին կղզին գրաւել, դիմադրողներին ջարդել և անձնատուր եղած սուլթանի զինուորներին մերկացնելուց յետոյ, սուլթանին իբր ապացոյցներ ուղարկել՝ նրա այրուող սիրտը աւելի լաւ շամփրելու համար։

Ռմբակոծումից յետոյ յիմար դրութեան մէջ ընկած խորիմաստ դիպլօմատները իրենց „համբերատար" սպառնական նոտայով,—որով պահանջում էին 6 օրուայ ընթացքում կղզին մաքրել յունական զօրքերից,—աւելի յիմար դրութեան մէջ ընկան։ Յունաստանը մերժել է. հարկաւոր է սպառնալիքները գործադրել։ Բայց ինչո՞ւ չեն գործադրում. չէ որ մի քանի օր արդէն անցել է. ի՞նչ եղաւ դրանց համբերատարութիւնը . . .

Մինչ այս, մինչ այն՝ ահա թէ ինչեր են տեղի ունենում։

—Դրութիւնը խիստ ահաւոր է Կրետէի շատ կէտերում։ Ապստամբներն անընդհատ յարձակումներ են գործում տաճիկների վրայ, տեղ-տեղ յոյն սպաների հրամանատարութեան տակ։ Եղան ընդհարումներ ապստամբների և բաշի-բօզուկների մէջ Կանդիայի շրջակայքում։ Վերջիններից կան 60 սպանուածներ և վիրաւորներ։ Հրացանաձգութիւնը շարունակւում է անդադար։ Քաղաքին հրդեհ է սպառնում։

—Ապստամբները յարձակուել են Հիերապետրայի վըրայ, բայց յետ են նահանջել, երբ իտալական նաւը սկսել է նրանց ռմբակոծել։ 2,000 ապստամբներ բռնել են շրջակայ ռազմական դիրքերը։ Հերակլիոնի մօտ ծագած ճակատամարտում՝ տաճիկներից սպանուել են 6, վիրաւորուել 24 հոգի։

—Եւրոպական նաւերը տենդային արագութեամբ տեղափոխում են մուսուլման ընտանիքները Կրէտայից։ Թեսալիայի սահմաններում կենտրոնանում են անընդհատ տաճիկ և յոյն զօրքերը։ Առաջինների թիւն է այժմ մօտ 55,000, երկրորդինը՝ մօտ 13,000։

—Սուլթանի կառավարութիւնը անընդհատ հեռագիրներով փոխանակւում է պարսից շահի(°) և եգիպտական խեդիվի հետ պատերազմական պատրաստութիւնների համար։

ՆԻՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Ամերիկ. Պախոյէն Վարաժնունի ձեռամբ 1 դօլլար։

Աւս. Սուչաւա քաղ. Մկրտիչ Թէօպօլեան 1 ֆլօրէն։

Շվ. Ց. քաղ. Ա. Թ–ից 5 ֆր.

Տապար քաղ. կենտր. սնդուկի մէջ ստացուած են.

Գաղթավայրէն շըթայ 10 րուբլի, Մէլիքով 5 ր., Թէոդեանց 3 ր., Հովարար գիւղից՝ Սաթենիկ 15 ր., Փայլակ 10 ր., Ջանակ 5 ր., Ճորոխ 6 ր., Արամ 5 ր., Վարժարան 5 ր., Ծերուկ 5 ր., Ենովք 4 ր., Ճրոմի 2 ր., Լոյս 2 ր., Անձրև, Կայծակ, Արև մէկ մէկ ր., Խնձորիկէն մի ազգասէր 25 ր., Ալիւր 3 ր., Գետեղերքէն՝ Համբարձում 100 ր.

Գաղթավայրից՝ Գ. Մ. 25 ր., Գ. Թ. 25 ր., Հրէշ 5 ր., Վերի Խնձորիկից՝ Մաթոս 70 ր., Աւետիս 50 ր., Հովասուն 10 ր., Ակոբ 50 ր., Գետեզերքից՝ Աղասէր 15 ր., Գասպար 5 ր., Պաղտասար 5 ր., Պօղոս 1 ր., Յարութիւն 2 ր., Սեդրակ 2 ր., Արծաթ ջրից՝ Սեդրակ 10 ր., Սչ–ի Մեծ-գիւղից՝ Յ. Ո–ից 25 ր., Յ. Վ–ից 10 ր., Պ. Ո–ից 5 ր., Խոյ գիւղից՝ Կ. Մ. 25 ր., Աս Կ. Մ. 25 ր., Ր. Կ. եղբայրներից 13 ր., Հին հաչւից Խ–ի միջոցով 20 ր., Խ–ի միջոցով 15 ր., Նուշ գիւղի սաներից 11 ր.

Վրէժ կենտ. կօմիտէի սնդուկի մէջ ստացուած է.

„Ղօչան“-ից Նժդեհի միջոցով 1,000 ղռ.

Ս–տի կօմիտէի սնդուկի մէջ ստացուած են.

Ա. Կ. և . . . 500 ղռան, Տիկին Գոհար 400 ղռ., Ս. Շ. 250 ղռ., Ջ. Յ. 150 ղռ., Գ. Հ. Ջ. 150 ղռ., Տիկին Թ.–բաջի 1000 ղռ., Ա. Կ. 100 ղռ., Տիկին Պ. Պ. 100 ղռ., Ն. Ա. 100 ղռ., Տիկին Մ. Հ. 50 ղռ., Տ. Բ. Պ. 40 ղռ., Անյայտ 20 ղռ., ՈՓ 20 ղռ., Անյայտ 10 ղռ., Արհեստաւոր-Հայդուկից 50 րուբլի։

Փիլիպպօպօլի կօմիտէի սնդուկի մէջ ստացուած են.

Ա. Ե. 2 լէվ, Մ. Թ. 7 լէվ։ Թ. Գ. Ծ. 4 լ. Աղւանի 20 լ. 60 սանտ., Ա. Գ. 20 լ. 60 ս., Եղբարք Թ. 10 լ., Ս. Մ. Մ. Ղ. 5 լ., Մարզպետունի 3 լ., Ա. Ա. 10 լ., Թիւ 134 5 լ., Տ. Թ. 5 լ., Մ. Շ. 5 լ., Ա. Բ. 2 լ., Ա. Չ. 3 լ., Ե. Ա. 5 լ., Թիւ 100 2 լ., Կացին 5 լ., Ա. Ա. 5 լ., Կ. Շ. 5 լ., Խ. Ն. 3 լ., Ա. Եղբարք 5 լ., Մկրտիչեան 2 լ. 50 ս., Պ. Թ. 5 լ., Վ. Մ. 2 լ. 50 ս., Գ. Վ. 2 լ., Մ. Գ. 5 լ., Արթին 7 լ., Ն. Տ. 5 լ., Գ. Դ. 5 լ., Ա. Պ. 5 լ., Թ. Ա. 4 լ., Գ. Ս. 1 լ., Մ. Պ. 1 լ. 50 ս., Անժելիք 5 լ., Գ. Ա. 2 լ., Ս. Շ. 2 լ., Արցախ 103 լ., Կուման 103 լ., Ոսկերիչ 103 լ., Մեծ եղբարք 82 լ. 40 ս., Փոքր եղբարք 103 լ., Կօշկակար 35 լ., Լուսնթագ 101 լ. 50 ս., Պ. Եւ. երեց 103 լ., Ա. Ե. 5 լ., Մ. Թ. 2 լ., Սև հողեր 10 լ., Պ. Թ. 2 լ., Ն. Շ. 2 լ., Մուրադ 5 լ., Զօրս ընկերք 24 լ., Պ. Վ. երեք եղբայրք 24 լ., Ա. Ա. 6 լ., Մ. Պ. 5 լ., Կ. Մ. 5 լ., Տ. Դ. 5 լ., Մ. Գ. 3 լ., Խ. Կ. 5 լ., Մ. Շ. 2 լ., Ե. Խ. 1 լ., Ա. Հ. 4 լ., Ա. Ա. 1 լ., Մ. Խ. 1 լ., Թ. Ն. 1 լ., Ա. Թ. 1 լ., Բարեպաշտ ոՓ 1 լ., Կ. Պ. 6 լ., Մ. Վ. 6 լ., Մ. Խ. 10 լ., Բ. Պ. 1 լ., Մ. Կ. 10 լ., Ա. Ա. 10 լ., Հ. Ս. 2 լ., Կ. Շ. 10 լ., Մ. Ս. 5 լ., Պ. Ծ. 2 լ., ՈՓ 1 լ., Ա. Ա. 3 լ., Կրտակցիք 30 լ., Կրտակցիք 4 լ., Մ. Մ. 1 լ., Փ. Ա. 3 լ., Ա. Ն. 5 լ., Թ. Զ. 5 լ., Մ. Զ. 5 լ., Ա. Խ. 5 լ.

Գարապունար կայարանի Արապօ խմբէն 24 լէվ 60 ս., նոյն կայարանի Պետօ խմբէն 11 լ., Նոյն կայարանի համակրողներէն 7 լ., Խար–Կայի Առատաձեռն խմբէն 90 լ. 20 ս., Գայաճըգ կայարանի Գնունի-Սասուն խմբերէն 51 լ. 50 ս., նոյն տեղի համակրողներէն 14 լ., Հասկօվոյի ազգայիններէն 43 լ., Չըրբան կայարանի Առիւծ խմբէն 18 լ., նոյն կայարանի համակրողներէն 11 լ., Պօրիսովկրատ կայարանի Շմաւոն խմբէն 91 լ. 50 ս. Նոյն կայարանի համակրողներէն 46 լ., Սարամպէյ կայարանի Սունէն խմբէն 12 լ.

Վառնայի կօմիտէի սնդուկի մէջ ստացուած են.

Աստղիկ խումբ 7 ֆր. 50 սանտ., Վերջալոյս խումբ 5 ֆր., Աշխէն խումբ 8 ֆր. 60., Փայլածու խումբ 4 ֆր., Աղուէս 2 և 2 ֆր., Մուրճ 5 և 4 ֆր., Գրիչ 4 և 4 ֆր., Դշխուլի 4 և 4 ֆր., Զօր 4 և 4 ֆր., Քար 2 և 2 ֆր., Ճնճղուկ 3 և 3 ֆր., Թապէլա 2 և 2 ֆր., Ջաւար 1 ֆր., Թիւմէկ 2 ֆր., Նեփթաղիմ 2 ֆր., Մատլէն 2 և 4 ֆր., Պէլ 2 ֆր., Այգն 1 ֆր., Վիշապ 11 ֆր., Շնորհք 3 ֆր., Գերեզման 3 ֆր. Աստուրից 2 ֆր., Թռիչ խմբէն 4 ֆր.

Քաջունիքէն՝ Արաքս–Քաջունի 5 դհ., Արմէն 5 դհ., Հայրենասէր 5 դհ., Վեհանուշ 5 դհ, Խ. Թուղթ և Աշխատասէր 2 դհ։

Հայդուկներէն՝ Թափառական 5 դհ., Կայծ 5 դհ., Փամփուշտ 5 դհ.,—Ռուսմբէն՝ Գայլ 5 դհ., Հայկ 5 դհ.

Եամպօլի սնդուկի մէջ ստացուած են.

Խար–Կայ-ի Առատաձեռն խմբի գանձանակէն 18 լէվ 5 սանտ., Գայաճըգ կայարանի Գնունի խմբի գանձանակէն 15 լ., Ռատնէ–Մահալլէ ՈՓ 2 լ., Սթրալճա կայարանի Մօսինի խմբի գանձանակէն 40 լ. 35 սանտ., Նոյն կայարանի 4 պանդուխտներէն 4 լ., Գարնոպաթ կայարանի Անշատութիւն խմբի գանձանակէն 72 լ. 30 սանտ., Նոյն խմբէն կրկին 21 լ., Այդօս քաղաքի Ժիրայր խմբէն 33 լ., Գարապայիր կայարանի Մարտիկ խմբէն 13 լ.

ԱԶԴ

Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ հայ դաղթականների հետ միասին Բօլգարիա մուտք են գործել և բնակութիւն հաստատել բաւական թւով հայ լըրտեսներ։ Զգուշացնում ենք բօլգարաբնակ հայերին և հրաւիրում նրանց հարկաւոր միջոցները ձեռք առնել՝ այդ գարշելի սողուններին իրենց միջից դուրս քշելու։

Խմբագրութեանս դիմել հետևեալ հասցէով՝

Rédaction du **Droschak**, Genève (Suisse)

№ 6 VI ՏԱՐԻ 31 ՄԱՐՏ 1897

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse: Rédaction du "Droschak" GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Յ. Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ԿՈՉ ՅԱՄԱՅՆ ԲՈՒԼԳԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

—

Ժամը, ճակատագրական րոպէները վրայ են հասնում: Պատերազմը մօտ է՝ նա կընդունի սոսկալի ծաւալ և ամենացնցող կերպարանք: Եւ վա՜յ նրան, ով որ անպատրաստ կը գտնուի, վա՜յ անզէն բուլգարներին, յոյներին, հայերին, որոնց գլխին կը թափուին տաճիկ խառնիճաղանճ ամբոխի սրերի հարուածները . . .

ԲՈՒԼԳԱՐՆԵ՛Ր, ՅՈՅՆԵ՛Ր ԵՒ ՀԱՅԵ՛Ր,

Զուլուենք ի մի, միանանք եղբայրաբար և ընդհանուր ուժերով յարձակուենք մեր ընդհանուր թշնամու վրայ: Ճիշտ է, մենք կանոնաւոր զօրք չենք կազմում, բայց Աստուածը, ճշմարտութեան Աստուածը մեզ հետ է: Մենք կը յաղթենք:

ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ ԵՂԲԱՅՐՆԵ՛Ր

Զա՛յն տուէք վեհանձնաբար այս մեր սրբազան կոչին: Թո՛ղ իւրաքանչիւրը ձեզանից շտապի և հայրենեաց սուրբ սեղանի համար բերի այն, ինչ որ կարող է: Մի՛ մոռացէք, որ այժմ այն տենչալի րոպէն է, որը կոչում է մեզ դէպի մահ կամ ազատութիւն:

ԲՈՒԼԳԱՐՆԵ՛Ր, ՅՈՅՆԵ՛Ր ԵՒ ՀԱՅԵ՛Ր,

Պատրաստուեցէք կատաղաբար գոչելու „Անկցի՛ Օսմանեան բռնակալութիւնը: Նախատի՛նք և մա՜հ ամենամեծ բռնակալին, ամենաանուղղելի Ոճրագործին՝ Սուլթան-Համիդ կոչուած զազրելի կենդանուն:

Կեցցէ՛ ընդհանուր սրբազան Յեղափոխութիւնը:

ԲՈՒԼԳԱՐԱԿԱՆ „ՍՏՐԱՆՋԱ" ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԵԱԼ ԿՈՏՈՐԱԾ

—

Հազիւ հազ դադարել էին միմեանց ետևից սեղացող կոտորածների միակերպ, սրտաճմլիկ լուրերը: Հազիւ դադարել էին մահուան սիւնին դատապարտուած, դահճի կացնի տակ իր դատավճռի դէմ կռուող, երեսի կորով իր գոյութիւնը պահպանող հայ ժողովրդի սուր աղաղակները: Հազիւ հազ 'էր „խաղաղութիւնը" հաստատուել սուլթանի կայսրութեան մէջ համերաշխ Եւրոպայի „հզօր" հովանաւորութեան ներքոյ:

Եւ մինչդեռ մեր ունևոր դասը, մեր բարեգործները իրենց հաստ գրպաններից մի քանի ղրուշներ գաղթականներին, որբերին բաժանելով և մեծ եռանդով յեղափոխականներին անիծելով, իրենց ազգային պարտքը կատարած ու չարիքի առաջն առած էին համարում մինչդեռ մեր ազգի „պաշտպան" սևագլուխ ու կարմրագլուխ ասպետները՝ մեր հոգևոր ու մարմնաւոր իշխանները, կ ո տ ո ր ա ծ ն ե ր ի լ ո ւ ր ե ր այլևս չլսելով, հայ ժողովրդին անդորրութեան մէջ էին հռչակում. մինչդեռ Հանոտօն և իր եղբայրակիցները կրետական ապստամբներին ռմբակոծելն արդարացնելու համար՝ Եւրոպայի կամքը սուլթանին ընդունել տալո՜վ էին պարծենում. . . ճակատագրի դառն հեգնութեամբ՝ Եւերէկի, Քայսարի մի քանի մասնակի ընդհարումներից յետոյ բռնկուեց յանկարծ Թոքատի մեծ կոտորածը, որին հետևեց անմիջապէս շրջակայ հայ գիւղերի աւերումը...

Այո՛, դառն հեգնութիւն է սա դիպլոմատների „դրական յայտարարութիւնների" վրայ. դժբախտութիւն մեր փարիսեցի բարեգործների համար, որոնք ստիպուած կը լինեն մի երկու ցաւակցական խօսքեր ևս արտասանել և նորից դողդոջուն ձեռքը դէպի գրպանը տանել . . . Վերջապէս դա մի դաս է այն փափկասիրտների համար, որոնց չափազանց „նուրբ զգացմունքները" արգելք են հանդիսացել մինչև այսօր կեանքի տառապանքների մէջ խորը թափանցելուն, ժողովրդի վէրքերը մօտիկից քննելուն: Խայթ է այն „արդարամիտ" դիտողների համար, որոնք թշնամու աւերիչ հոսանքի դիմաց միմիայն յեղափոխականին նկատելով, դիակների առաջին շարքերում նրա դիակը կոխոտելով,— հենց այդ յեղափոխականին են համարել աղետի բուն պ ա տ ճ ա ռ ը: Դաս է կեանքի այն փիլիսոփաների համար, որոնք կեանքի ամբողջ ողբերգութեան ընթացքում ընկղմուած այլ և այլ „կարևոր" հոգսերի մէջ, անուշադրութեամբ բաց են թողել ողբերգութեան առաջին արարուածները և վերջին պատկերի վերջին րոպէներում մի սուր աղաղակից, ատրճանակի մի պայթումից յանկարծակի զարթնած, աչքի ընկած առաջին երևոյթը համարում են ողբերգութեան գլխաւոր մօտիւը:

Այս ի՛նչ էր, որ պատահեց: Ո՞վ էր սպասում նոր կոտորած. բաւական չէ՞ին նախընթացները: Չյագեցա՞ւ վերջապէս արիւնարբու գազանը . . . Մի՞թէ այս

անգամ ևս դահիճները կը շարունակեն հրճուել . . . Մի՞թէ Եւրոպան կրետական ապստամբների համար պատրաստած ռազմամթերքի առատ պաշարից մի քանի աւելորդ փամփուշտներ բաժին չի հանիլ՝ արիւնաթաթախ մարդասպաններից գէթ մի քանիսին գնդակահար անելու և հայ ժողովրդի դաղւած սիրտը գէթ մի քիչ հովացնելու . . . Արդար զայրոյթ, ապարդիւն պահանջնե՛ր, միամիտ յոյսե՛ր . . . որ չեն վերանում երբէք, չնայելով իրականութեան դառը դասերին։

Թոքատն աւերուեց. սուլթանը և դիպլօմատները վերսկսեցին իրենց կատակերգութիւնը, եւրոպական մամուլը, որ՝ կլանուած ամբողջովին կրետական հարցով՝ մոռացել էր մեզ, որ խօսում էր մեր կոտորածների մասին, իբրև մի պատմական եղելութեան, մտաբերեց նորից, որ դեռ կայ մի ժողովուրդ, որը կեանքի և մահու կռիւ է մղում, որն անվերջ տանջւում, անվերջ արիւնաքամ է լինում։

Բայց եթէ օտարը՝ հեռու մեր կեանքից յիշում է մեզ միայն այն ժամանակ, երբ մեր նահատակների աղաղակներն իրենք են հասնում և ուժգնութեամբ բախւում նրա ականջներին, դուք, հայ ազգի փաստաբան հռչակուածներ, դո՞ւք ևս կոտորածների պէտք է սպասէք, որպէսզի զգաք մեր ժողովուրդի յուսահատական վիճակը։

Դարձրէ՛ք ձեր հայեացքները բուն երկրի մէջ հեծող եղբայրակիցների վրայ, կարդացէ՛ք նրանց թղթակցութիւնները։ Այսօր նրանք „հետաքրքիր“ չեն, հերոսական կռիւներ չեն նկարագրում, վրէժխնդրական զգացումներիդ բաւականութիւն չեն տալիս . . . սակայն նրանց մէջ փայլում է թշնամու անհաւասար ուժի դիմաց կաշկանդուած կորիճի զսպուած հայեացքը, նրանց ամեն մի տողը տանջանքների նոր աշխարհ է բանում, ամեն մի խօսքի հետ արիւն է կաթում։

Ի՞նչ ընել, լսւում է ամեն կողմից . . .

Ի՞նչ ընել . . . յուսահատ գոչում է „տուները փակուած, ցուրտ գետնի վրայ նստած“ սղերդցին . . . Եաթաղանի ուժի տակ դողալով, դիմում է նա խմբովին մահմեդականութեան ծոցը և քօռ, քաչալ, կաղ, քոսոտ քիւրդ վհուկների գրկերում գտնում իր փրկութեան միակ միջոցը։

Ի՞նչ ընել . . . հարցնում է բազմաթիւ չարիքների դիմաց մոլորուած և նոր կոտորածի պատկերը աչքի առջևը միշտ պահող երզնկացին։

Ի՞նչ ընել . . . հառաչում է քրդի խարազանի տակ մորմոքող, իր արիւն-քրտինքով Մայր-երկիրը ողողող աղբակեցին։

Ի՞նչ անել, ո՞ւր գնալ . . . Այս յարատև, օրէօր կրկնւող, օրէօր աճող լուռ, աղմուկ չհանող, եւրոպացիների լռութիւնը չգրգռող դժոխային պայմաններն են, որ խեղդելով, ոչնչացնելով համարձակներին, հնարաւորութիւն են տալիս ապրել միայն նրանց, որոնք ընդունակ են կրելու ստրկական լուծը, կեղծելու, քծնելու... Սա է, որ մեր ժողովրդին բարոյական մահ է սպառնում, մեզ դէպի կորստեան անդունդը տանում։ Այս հոսանքը պէ՞տք է կանգնեցնել, սրա պատճառների դէմ է հարկաւոր կռուել. մինչդեռ այս բոլորը ձեր բթացած նեարդերի վրայ այլևս չի ազդում՝ հեղեղներով արիւն պէտք է հոսի, որպէսզի դուք մի կաթիլ արտասուք թափէք, մերկ ու անօթիների անվերջ խմբերը պէտք է դեգերեն աշխարհիս բոլոր ծայրերում, որպէսզի դուք մի գաղթականի կերակուր տաք. հազարաւոր զոհերի ճիչեր պէտք են, որպէսզի մի հառաչանք արձակէք։

Ազգի պաշտպան հռչակուած ասպետնե՛ր, ազգային մեծ բարեգործնե՛ր, խոհեմութեան ու անգործունէութեան հաստափոր առաքեալնե՛ր . . . դուք, որ անընդունակ էիք գտնում իրականութիւնը դիտելու իր իսկական գոյներով կամ կամովին փակում էիք ձեր աչքերը այս կամ այն զոհաբերութիւնից ճարպկութեամբ խոյս տալով. դուք, որ պահանջում էիք մեզանից դադարեցնել յեղափոխական շարժումը (! . . .) և խոստանում էիք խ ա ղ ա ղ ու թ ի ւ ն հայ ժողովրդի համար . . . ի՞նչ կասէք մեզ այժմ։

Եթէ անկեղծ էիք, սխալուած էիք, հասկացրի՞ն ձեզ Թոքատի հարիւրաւոր նահատակները։ Եթէ կեղծում էիք, մնա՞ց այլևս պատրուակ, որով ձեր հոգու դատարկութիւնը ծածկէիք . . .

Խաղաղութիւն էք պահանջում դուք։ Մենք չենք ուզում այդ խաղաղութիւնը. մենք կը կռուենք, մենք թոյլ չենք տալ, որ դա հաստատուի։ Խաղաղութիւն սուլթանի րէժիմի տակ, նշանակում է հաստատութիւն այդ րէժիմին, ստրկական-անասնական դրութեան վերահաստատումը, հայ ժողովուրդի բարոյական անկումը . . .

Մենք ևս պահանջում ենք խ ա ղ ա ղ ու թ ի ւ ն և մենք ձեռք կը բերենք այն մեր սրբազան կռւով. նա կը լինի ժողովուրդի համար իսկական խաղաղութիւն, թէև խոստովանում ենք, արիւնարբու վամպիրներին կամ դիմակաւոր ազգասէրներին նա ոչ մի բարիք չի խոստանում։

Իսկ այժմ, եթէ չէք ցանկանում մեզ հետ լինել և մեր անհաւասար կռւի մէջ մեզ աջակից հանդիսանալ, դէ՛ն ձգէք ձեր դիմակը և անցէք բացարձակապէս մեր թշնամիների շարքը,— եթէ դուք մեզ թշնամի էք նկատում։ Իսկ եթէ ոչ, եթէ դուք ձեր սրտում խոստովանում էք մեր արդար ճանապարհը, մեր մղած կռւի անհրաժեշտութիւնը, բայց ձեր վախկոտութեամբ ձեր լքուած հոգու շնորհիւ չէք կարողանում մեզ հետևել . . . ամօթ զգացէք գոնէ, թողէ՛ք մեզ հանդիստ, փակէ՛ք ձեր բերանը և ձեր բորբոսնած կուրծքի գարշահոտութիւններով մի՛ ապականէք յեղափոխական մաքուր միջավայրը . . .

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

2/14 Մարտ 97 Թ.

Թիւրք կառավարութիւնը տենդոտ գործունէութիւն մը ցոյց կուտայ այս օրերս. զինուորներու փոխադրութիւն, նաւատորմիղի պատրաստութիւն (՞), նոր վաշտերու կազմակերպութիւն և այլն և այլն. սակայն տաճիկ ժողովուրդը յուսահատ և միանգամայն զայրացկոտ վիճակի մէջ է. անոր ցեղական սնապարծութիւնը օդը ցնդած է, մեծամասնութիւնը զգացած է, որ ներկայ կառավարութիւնը դէպի կորուստ կառաջնորդէ Թիւրքիան, և ամենքը դժգոհ՝ անէծքներ կը թափեն Մեծ-Մարդասպանի գլխին: Բախտաւոր պիտի ըլլայ սուլթանը, եթէ Կրետէն Յունաստանին չթողի կամ անկախութիւն չըստանայ. հակառակ պարագային մոլեռանդ Թիւրք ժողովուրդը շատ յուսալի է, որ լուծէ իր վրէժը և այս անգամ՝ սուլթանէն: Թիւրք սկսնակ յեղափոխականը արդէն մատի փաթթոց ըրած է այդ, և իրեն ազատ ասպարէզ բացուած է աւելի լաւ մատնանիշ ընելու կառավարութեան վատթար և մահաբեր ընթացքը, ցոյց տալու անոր ապիկարութիւնը և նոր կազմակերպութեան մը պէտքը:

Հայ յեղափոխականը ուրախութեամբ կը տեսնէ սուլթանի կառավարութեան օր ըստօրէ ծիւրիլը և մաշիլը. իր գոհ ժպիտը չի կրնար զսպել, երբ կը տեսնէ թէ իր յաջողութեան պայմանները հետզհետէ կաւելնան, թէ իր սկսած և շարունակած գործը մօտ է յաջողութեամբ պսակուելու, հակառակ անամօթ Եւրոպայի անդուլ ջանքերուն, որով կուզեն յապաղման քաղաքականութեան տակ դարձեալ քնացնել Հայկական խնդիրը: Եւրոպան յիշեցինք, չմոռնանք ուրեմն, որ վաղը պիտի ներկայացի այն հաւաքական նօթան, որ 3-4 ամիսներէ ի վեր այնչափ դաղտնի կերպով կը պատրաստուէր, և որուն պարունակութեան մանրամասնութենէն դեսպանական քարտուղարներն անգամ տեղեկութիւն չունին: Սակայն կը լսենք՝ թէ գերմանական դեսպանը արդէն տուած է սուլթանին անոր մէկ օրինակը իր վեհապետին հրամանով: Եթէ ճիշտ է, ուրախ ենք, որովհետև անգամ մ՚ալ կը հասկցի Գերման կայսեր պատուի աստիճանը:

Կեղծաւոր և աղէս կառավարութիւնը առերեւոյթս հաշտ քաղաքականութեան մը կը հետևի հայերու նկատմամբ. ձերբակալութիւններ դադրած են, հետապնդումներ չկան, և ո և է խռովութեան մը տեղի չը տալու ահագին զգուշութիւն: Հիմայ խնդիրը Թիւրքերու և յոյներու վրայ է միայն: Այս երկուքի յարաբերութիւնները երթալով կը լարուին. ալ սկսած են ընդ ակամբ նայել իրարու: Քիչ-քիչ կը պակասին այն մտերիմ յարաբերութիւնները, որ տաճիկները ունէին յոյներու հետ Հայկական խնդրի նկատմամբ: Առաջինները դարձեալ սկսած են նախագաս համարել հայը յոյնէն, իսկ վերջիններս իրաւունք կուտան հային իր իրաւունքը պաշտպանելու և պահանջելու քաջութիւն ունենալուն: Դէպք մը, որ տեղի ունեցաւ Ղալաթիա, բաւական շեշտեց այս ձգտումը: Տաճիկ սպայ մը գիւղական շեշտեց այս ձգտումը: Տաճիկ սպայ մը գիւղական գինետունը կը մտնէ, ուր Եորկիոս Թագաւորին պատկերը կախուած տեսնելով՝ կը գրգռուի՝ կսկսի հայհոյել ու կը ջանայ պատկերը վար առնելու և պատռելու: Գինետան յոյնը կը պահանջէ սպայէն՝ հանդարտ մնալ և չհայհոյել իրենց „օծեալ" Թագաւորին: Սպան կը զայրանայ և կը զարնէ յոյնին: Վերջինս անձնապաշտպանութեան կը գիմէ և իր ազգային արժանապատուութեան արդար կիրքովը բորբոքած՝ կը քաշէ դանակը և կը մխէ սպային կուրծքը: Յոյնը կը փախի կազատի:

Պոլսոյ կողմը վեզիր խանի մէջ, ռուսական Թարգմանին ներկայութեամբ և անոր առաջնորդութեամբ խուզարկութիւն մը կատարուեցաւ, 10-15 քիւրտեր ձերբակալուեցան և 4-500-ի չափ սափաստրօփա, եաթաղան գտնուեցան պահուած 3 սենեկի մէջ: Քիւրտերը կը բողոքեն ըսելով՝ թէ կառավարութիւնը իրենց յանձնած էր այդ զէնքերը, և թէ իրենք անոնք գործածելու հրամանին կսպասեն և ոչ թէ ձերբակալման: Լուր տուողը վրացի մ՚եղած է, կըսեն:

Զինուորական բժշկական վարժարանին մէջ նոր խուզարկութիւններ եղան: Տաճիկ և հրէայ ուսանողներու քովէ „Մէշվէրէթ" լրագիրէն գտնուեցաւ. և երկու հէայ ուսանողի հետ բաւական ալ տաճիկներ բանտ առաջնորդուեցան:

Կամուրջին վրայ երկու լրտեսներ քանի մը ոստիկաններով զինուորական բժշկական վարժարանի ուսանող մը ձերբակալել կուզեն: Նա չուզեր անձնատուր ըլլալ. ամբոխը խռնուած կը դիտէ: Ուսանողը թուղթի պէս բան մ՚ունի իր ձեռքը, և առանց թողնելու, որ իրեն դպչին, ետ-ետ կընկրկի մինչև կամուրջի եզրը և թուղթը ծովը կը նետէ: „Ծովը, ծովը" կը գոչէ ամբոխը ահագին քահքահներով: Անձնատուր կըլլայ ուսանողը, որ բռնցի հարուածներու տակ կառաջնորդեն մինչև պահականոց և անտի ոստիկանութեան բանտը: Ասոնք նը-մոյշներ են այն բազմաթիւ ձերբակալութիւններու, որ միշտ տեղի կունենան մայրաքաղաքիս մէջ:

Երեկ, մարտ 1, 300-էն աւելի խաներու սենեկապետներ, օթելի տէրեր ոստիկանութեան դուռը կանչուած էին: Կրկին նոր հրամաններ տուեցան ուշադրութիւն դարձնել ու իրենց խաները և օթելները եկող ճամբորդներու և անոնց այցելուներու վրայ, և եթէ նշմարեն ո և է կասկածելի անձնաւորութիւն մը կամ դէպք, անմիջապէս իմացնեն. հակառակ պարագային պատասխանատուութեան տակ պիտի իյնան:

Ահա այս է Պոլսոյ դրութիւնը. առերևոյթ հանդարտութեան տակ ահագին փոթորիկներ կսպասին...

ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԻՑ

7/19 փետրուար 97 Թ.

Գործերը երթալով կը վատթարանան, անկարգութիւնները օր օրի կը բազմապատկուին և կը սաստկանան: Դրութիւնները շատ վատ է. ջուրը ակէն պղտոր է, ալ ո՞վ դարման պիտի ընէ: Կառավարութիւնը ինքը կը քաջալերէ և ինքը կը սարքէ ամէն դաւադրութիւն. կոյր, ռամիկ ժողովրդին մոլեռանդութիւնը ահաւոր զէնք

է շինել և անով ամէն չարիք կը հասցնէ մեր գլխին։

Թիւրք ժողովրդի կատաղութիւնը մոլեգնութեան կը հասնի։

Կոտորածէն առաջ այդ արիւնարբու խուժանը ամէն յոռի վարմունք ի գործ կը դնէ և մօտալուտ կոտորածի մը ահուդողի տպաւորութեան տակ անտէրունչ հաժը կը սարսափեցնէ։ Նորէն կոտորածի հոտ կայ, վտանգը անխուսափելի կըլլայ, եթէ անմիջական փոփոխութիւն տեղի չունենայ ներկայ կառավարութեան բոլոր սրիկայ պաշտօնեաներու վրայ։ Փրփրած ու կատղած թիւրքին հետ ամէն յարաբերութիւն անհնարին է դարձել այլեւս։ Թողունք ռամիկը, նոյնիսկ զարգացած կարծուած դասն ալ սադայէլ է կտրել, և կարծես հում-հում կուզէ լափել, մինչև իսկ այն հայը, որուն հետ տարիներով նստեր-ելեր, մտերիմ ապրեր, աղուհաց կերեր, օղի կոնծել և ջ ա ն ա խ ե օ լ տ ա շ ի է եղեր։ Յաճախ, առանց ո և է պատճառի, մարդ այնպիսի անլուր անարգանքներ կը լսէ, իր ազգային և կրօնական զգացումները այնպիսի վիրաւորանքներ կը կրեն, որոնց առջև ոչ միայն պատուասէր մարդը, այլ կոպիտ վայրենին անգամ չէ կարող հանդուրժել։ Բայց հայը այսպիսի դառն հանգամանքի մէջ կամաց-կամաց ստիպւած է համբերելու, կլլելու այդ հայհոյանքները, չէ թէ իր անձին խնայելու համար, այլ այն անմեղ հազարաւորներուն, երեխաներուն համար, որոնք, գուցէ իր պատճառով, սրի ճարակ պիտի ըլլան։ Արդէն հրդեհը բռնկելու համար պզտիկ կայծ մը կը պակսի։

Երբ օրւայ չարիքները „Դրօշակ"-ի ընթերցողներուն տեղեկագրելու համար գրիչը ձեռքս կառնեմ, դէպքերը այնքան խճողւած կը գտնեմ իմ առջևս, որ բոլորովին շւարած, չեմ գիտեր թէ ուրկէ սկսիմ, որմէկը գրեմ և որը թողում։ Հէնց գրած պահուս, թերևս մէկէ աւելի դէպքեր պատահած են, պատահարներու անսպառութիւն մը կայ։ Օրերս շուկային մէջ Պաղտասար Գասպարեան անուն հայ խանութպան մը, սոֆթայէ մը չարաչար կերպով վիրաւորուեցաւ, զի հայը սոֆթային պահանջած գնով մերժած է ապրանք տալ։ Վիրաւորեալը կառավարութեան բողոքելու չի համարձակիր. ինչու որ գիտէ, թէ անոր հետ ուրիշներու զայրոյթն ալ պիտի հրաւիրէ իր վրան։

Այս դէպքը տեղի կունենայ զինւորական պահակներու ներկայութեամբ, որոնք չի միջամտեցին գատ, նախատելով կըսեն՝ „ագսըն, կեավուր գանը տըր, նէ տէ մունտար տըր" (թող թափւի, անհաւատի արիւն է, ինչքա՞ն ալ գարշ է)։ Միևնոյն օրը դպրոցական տղայ մը շուկայէն անցած ժամանակ թիւրք սրիկայ մը դաշոյնի հարւած մը կուտայ անոր թևին. յաջորդ օրը նոյն տեղը ուրիշ պատանի մը կը հալածւի և մազապուր կը պրծի. ուրիշ հայ մը Բզուան գիւղէն գալու ժամանակ սոսկալի կը ծանակւի և կը կողոպտւի։

Ճիշտ շաբաթ մը առաջ ալ, կարգ մը հայեր, Ղարաքիլիսէն Բզուան հասնառի կերթան, թիւրքեր, իբր հարևանի իրաւունքով, ահագին աղմուկ ու խռովութիւն կը հանեն, առարկելով՝ թէ իրենց գիւղի աղջիկը չէն ուզեր ուրիշ գիւղացիի տալ. վերջապէս մեծկած բ է շ ք է շ ո վ կը յաջողին բերաննին գոցել։

Երէկ ղարատիկէնցի հայ երիտասարդ մը, Գրիգոր Զաքարեան, քաղաք եկած ատեն, յանկարծ ձախ կըշտէն դաշոյնի ծանր հարւած մը կընդունի, պալիպէկցի Մուրթըզա անուն թիւրքէ մը։ Նոյն ժամանակ քաղաքիս մէջ, թիւրք կիներու և լաճերու կողմէ, Եփրեմեան Սիմօնի աղջկան յուղարկաւորութեան գնացող թափօրին դէմ ծանր ցոյց մը կը կատարւի։

Տեսնելով, որ ամէն կողմէն չարիքները կը բազմանան, այս շաբթւայ բ ա զ ա ր ը միւշիր փաշայի հրամանով արգիլւեցաւ, որպէսզի բազարի պատրւակով քաղաք դիմող գունդագունդ թիւրքերի կատաղի խուժանէն անկարգութիւններ չի պատահին։

Անցեալ նամակովս մոռցայ յիշել քանի մը թիւրք բանտարկեալներու հայ պատանի մը բռնաբարելնին ոստիկաններու առջև. բողոքներ եղան, բայց չարագործները ճակատնին բաց կը պտտին, կարծես սուլթանի ֆէրմանը կայ ծոցերնին . . . անպատիժ կը մնան նա և ողբացեալ Ճանիկի սպանիչները։

Կառավարութիւնը, ընդհանուր ներողութիւնով ազատուող մեր ազգայինները, որոնք գաւառիս խելացի ուժերն կը կազմէին, քաղաքական իրաւունքէ զրկեց։ Անոնց առջև սկէց վերջը փակւեր է քաղաքային և ազգային պաշտօնական ամէն դուռ։ Նոյնպէս ազատուող չորս փաստաբանները պաշտօնապէս արգիլւեցան իրենց արհեստը ի գործ դնելէ։ Այսպէս, անոնք պարկեշտ աշխատութենէ զրկւելով կը դատապարտւին մեղսապարտ անգործութեան նոյն իսկ մեր . . . արդար և . . . իմաստուն կառավարութեան կողմէն։ Ասոր ալ ներողութիւն կըսեն, է՜ . . . ո՞վ գիտէ կարգը քահանաներուն և ուսուցիչներուն պիտի գայ գուցէ։

Անմեղներու արիւնը ծծած հողին վրայ վրէժներ միայն կը բուսնին . . .

ՆԱՄԱԿ ՍՂԵՐԴԻՑ

Սղերդ, որ լեռնադաշտի մը վրայ շինւած գիւղաքաղաք մ'է, ունէր (հիմա չունի) շուրջ 550 հայ, որք իրենց մայրենի լեզուէն զրկւած՝ կը խօսէին խիստ աղաւաղեալ արաբերէն մը, և մասամբ քրդերէն։ Վերջերս միայն շնորհիւ հայոց „Միացեալ Ընկերութեան" քիչ մը հայերէնը տարածւած էր երկսեռ երիտասարդութեան միջև։ Սղերդի համար լաւ ապագայ մը կը գուշակւէր. իր մայրենի լեզւին տիրանալով, այդ գիւղաքաղաքը, շուտով կրնար կրթել իր շրջակայ գիւղօրէից մէջ գտնւող քրդախօս հայերը։ Բայց աւա՜ղ, սև օրը հասաւ, 1895 թ. սեպտ. 18-ի ցոյցէն յետոյ, երբ գազանամիտ Համիտը արիւնով ողողեց Հայաստանի շէներն ու քաղաքները, Սղերդ զգաց, որ ինքն ալ անվնաս չպիտի մնար այդ անագորոյն հարւածէն, մանաւանդ այն ատեն, երբ Բաղէշ հրոյ և սրոյ ճարակ եղաւ (Սղերդ Բաղէշու կուսակալութեան մէջ է)։

Բաղէշի կոտորածը լմնալէն վերջ՝ կառավարութիւնը իր աչքը դարձուց Սղերդի վրայ, որու երիտասարդութիւնը կամաց-կամաց կը ծաղկէր։

—„Այսչափ միւսիւլմաններու մէջ՝ սա բուռ մը հայերը աւելորդ են, հայերը մաքրենք ասոնցմէ", ըսաւ կառավարութիւնը ու իր խօսքը կատարեց։

1895 թ. սեպտեմբերի վերջերը մօտակայ գիւղերու քրդերը Սղերդ լեցւեցան։ Երիտասարդութիւնը կզգար,

որ վտանգը մօտալուտ է, և սակայն ի՞նչ կրնար ընել զէնքի պակասութիւն կար, իրաւ է որ ամէնքը ունէին խենչարներ (դաշոյն) բայց ի՞նչ կրնար ընել այդ ոչինչ զէնքով և քանի մը չախմախլըներով մարթիններու դէմ։

Չարագուշակ օրը հասաւ, կոտորեցին, թալնեցին, առևանգեցին, աւերեցին . . .

* * *

Ալ անկէ վերջ ո՞վ գործի կը նայէր, տուները փակւած ցուրտ գետնին վրայ նստած ժողովուրդը կը մտածէ ու կը մտածէ, ի՞նչ ընել . . .

Ի՞նչ ընել, դա մի այնպիսի հարցում է, որու պատասխանելը շատ ու շատ դժուար է։

Ի՞նչ ընէ ժողովուրդ մը, երբ ամեն բանէ զրկւած է, զէնք չկայ, հագուստ չկայ, ուտելիք չկայ . . .

Շատերն անօթի մեռան արդէն . . . բայց վերջը . . .

Արդէն քրդախօս քանի մը հայ գիւղեր ընդունած էին իսլամութիւնը, ինչպէս Տէհ, Ռընտվան, Հազզօ գիւղերը Սղերդէն քանի մը տուներ ալ ընդունեցին կոտորածէն վերջ հետզհետէ իսլամացան։

Իսկ ներկան աւելի տխուր է քան անցեալը. Նորտարին Սղերդի նոր փշեր, նոր ցաւեր բերաւ, խեղճութիւն, անօթութիւն . . . ամեն ինչ կատարեալ է։

Խաղողի ողկոյզները դեռ կախւած կը կենան որթերէն 96-էն ի վեր ոչ այգեկութք եղած է և ոչ հունձք, ո՞վ կը համարձակի տունէն դուրս ելնել, այգի կամ արտ երթալ, քիւրդերը անօթի գայլերու պէս կսպասեն։ Երևակայեցէք, անգամ մը, երբ աղբիւր երթալ անկարելի է, որ հազիւ հարիւր քայլ հեռու է քաղաքէն ու ստիպւած են հորի ջուր խմել, ո՞ւր մնաց արտերը, այգիները, որ 1/4 ժամէն մինչև 2 ժամ հեռի են քաղաքէն։

Արհեստաւորները՝ գործ չըլլալուն, դադրած են աշխատելէ, միայն մի քանի կօշկակարներ, երկաթագործներ, որոնք թիւրքերու պաշտպանութիւնը կը կրեն, իրենց օրապահիկը հանելու չափ հազիւ թէ կաշխատին ու այդ ալ ստիպւած են կիսելու զիրենք պաշտպանող թիւրքերու միջև։

Յունուարին քանի մը ընտանիք ուզեցին Մուսուլ գաղթել՝ բայց Ագգապէ կոչւած տեղը, որ քաղքէն 3/4 ժամ հեռի է՝ կոտորւեցան։

Եկեղեցին ու դպրոցը կոտորածի օրէն ի վեր գոց կը մնան։ Ժողովուրդը առանց եկեղեցիի, առանց դպրոցի, առանց աշխատանքի դիմացաւ ամբողջ տարի, ահով, դողով, խեղճութեամբ, նօթութեամբ, սակայն դիմացաւ։

Բայց անկէ անդին դիմանալը անկարելի կը նկատէ ժողովուրդը ու կսկսի տաճկնալ, կիներ. երիտասարդներ հետզհետէ իսլամութիւն կընդունին։ Կառավարութիւնը հրճւանքով՝ կը տեսնէ անհաւատներուն Մուհամմէտի սուրբ և ճշմարիտ կրօնը ընդունելը, ուրախութեանը չափը չկայ։

Իսլամութիւն ընդունող կիները կամուսնացնէ քիւրդերուն հետ, իսկ երիտասարդներուն պաշտօններ կը բաշխէ՝ ի՞նչ պաշտօններ . . . հեծեալ և հետիոտն ոստիկանի վաշտեր կը կազմէ անոնցմէ, որպէսզի ապագային, որ հեռի չէ ըստ երևոյթին, անոնց ձեռքով ջարդել տայ մնացած քանի մը խեղճ հայերին։

Հային հայի ձեռքով ջարդել տալ՝ դա կառավարութեան միակ փափագն է։

Շիրւանի քրդերուն մէջ եղած կոյր, կաղ, անկար և ծերունի կիները գրեթէ ամէնքը Սղերդ եկած են. կառավարութիւնը ամենին անունը զատ-զատ թուղթերու վրայ գրել կուտայ ու տուփի մը մէջ կը նետէ, որ մեծ մզկիթը դնել տւած է։ Ամեն իսլամութիւնը ընդունող հայ պարտաւոր է երթալ այդ տուփէն թուղթ մը քաշել, որի վրայ գրւած անւան տէր եղող կնոջ հետ պարտաւոր է ամուսնանալ։ Այսպիսով եղած ամուսնութիւնը անքակտելի է կառավարութեան հրամանին համեմատ, ու որպէսզի թրքացած հայ մը իր կնիկէն դժգոհ չձգէ զայն, առաջուընէ անոր տունը-տեղը գրաւի տակ կառնեն։

Կը մտածեմ, ի՞նչ պիտի լինի այս գիւղաքաղաքը մօտաւոր ապագայի մը մէջ . . . հայերէն խօսել գիտցող երիտասարդներէն շատեր մեռեր գացեր են, մնացեալ մէկ քանին որի՞ հետ խօսին . . , հայ աղջիկը քրդի հետ ամուսնացած, և հայ երիտասարդը քիւրդ աղջկայ հետ . . . ո՞ւր կերթայ ասոր վերջը . . .

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

Ժամանակակից շինուկը գտնուած ըլլալու լուրը Եւրոպայի մէջ ուրախութեամբ ընդունեցաւ. բայց քաղաքականներին եւրոպացիները թող զգան իրենց հրճւանքը, զի հնդկաստանի ժամանակէն մեծ ժամանակներ կան մարդկութեան մէջ. ո՞վ պիտի գտնէ Համիտի, այդ մեծ եումուրճակին, շինուկը: Ահա հարցը:

Անսովոր դար է այս դարը: Այն օրէն ի վեր, երբ Աստուած երկրագնդին հիմերը դրաւ (քարով խեցով չի դնէր), մարդկութիւնը այսպիսի ճգնաժամի մէջ ինկած չէր: Առենով աշխարհի վրայ երեւան եկան ամենազօրաւոր կայսրութիւններ, մեծ աւազակներ, որոնք որոշ սահմանի մը մէջ ամեն բան կընէին. այսօր կան մեծ աւազակապետներ, որոնք փառաբանօրէն Մեծ տէրութիւններ անունը կը կրեն եւ որոնց շահատակութեան-կեդրոնը ամեն տեղ է իսկ սահմանը ոչ մէկ տեղ: Բռնակալ պետութեանց ձգտումները բոլորովին խոտորնակ կը համեմատի ժողովուրդներու ազատութեան, խաղաղութեան ձգտումին:

Երբեմն հռոմայեցի կայսր մը, երբ մարդ չի գտնէր, ճանճ կսպաննէր. այսօր խոշոր կայսրութիւնները ճանճի տեղ անտէր ազգերը կը ջարդեն. այդ իրենց հասարակ զւարճութիւնն է: Երբ աշխարհ խաղաղ ըլլայ իրուհրական կայսրներու գոյութիւնն նշանակութիւն չունի արդէն:

Կրետէի ռմբակոծման առեն Գերման կառավարութիւնը Բալկանակին մէջ անպատկառօրէն կը յայտարարէր՝ թէ ինք ձեռքէն եկածը պիտի ընէ Թիւրքիան անվթար պահելու համար, զի Գերմանիան 200 միլիոնի շահ ունի արեւելքի մէջ . . . Այս քարը ծանր էր Թիւրքիոյ ժողովուրդներուն համար: Իրաւ է կոպիտ Գերմանիայէն բան մը չէ կարելի յուսալ. նախ որ այդ ազգը պատմութեան մէջ մարդասէր անցեալ մը չէ ունեցած եւ չպիտի ալ ունենայ. զի իր շահամոլութեան ու եսականութեան խեցին շատ հաստ է: Գերմանիոյ հիմկու բռնաւոր կայսրը մարմնացումն է գերման ազգային կարծրասրտութեան. իր տխեղծ մարմնին մէջ չեն կարող ասպնջականութիւն գտնել սրտի ու հոգիի մեծութիւն: Թիւրքիոյ ժողովրդասպան սուլթանը, մինչեւ հիմա միակ լուսաղբար մը ունէր, Սոյթարի Կիյօմն էր: Ստոյգ աղբիւրէ իմացուած է, թէ Համիտը վեց միլիոն ֆրանքի ընծայ ղրկեր է գերման կ ա շ ա ռ ա կ ո ւ լ վեհապետին, անոր պաշտպանութիւնը խնդրելով . . . Ուրեմն պարապ տեղը չէ, որ Կիյօմը աչքերը խոլորած կը պոռայ, թէ „արեւելքի մէջ շահեր ունի..." Ահա կայսր մը, որ իր արքայազունները կողոպուտով կը մեծցնէ Աւկուստինա կայսրուհին անշուշտ այդ թանկագին նուէրներուն վրայ նշմարեց հայ կոյսերու արեան ծիրանի բիծերը . . .

Մուրացիկ Կիյօմին վերջին խօսքն մը: Մենք գիտենք՝ թէ ինչ շահեր ունի Գերմանիան Թիւրքիոյ մէջ: Քանի որ մենք ազատութեան եւ մարդկային իրաւունքի համար մաքառող ժողովուրդ մ՚ենք, հայութեան էն խեղճ անկարը չենք փոխեր այդ 200 միլիոնին հետ. իսկ մեր յետին հերոսին ոսկորները հօհենցօլէրն գերդաստանին հետ: Եթէ Գերմանիան աստուծմէ զատ մէկէն չի վախնար--ինչպէս կը մռնչէ Կիյօմը--մենք աստուծմէ ալ չենք վախնար: Այդ հաստատուոթ քայլերը թէեւ կը սիրէ հերոսի քայլեր առնել--եթէ բնութիւնը ծու-

ռուփուն էր շինէր զինքը-բայց կը մոռնայ որ տկարները հերոսներ են զօրաւորներուն բով, եւ մարը աչքը առնողները տէրն են իրենց ճակատագրին:

Դերման ազատասպան կրուներուն դիմաց, ժողովուրդներու ազատագրո ռուվերը կան:

Իգմնրի յոյն վաճառականները. Դերմանիոյ լիրը ընթացքէն զայրացած վճռեր են Դերմանիոյ հետ ոչ եւ է առեւտուր չընել. եթէ հայերն ալ հետեւին յոյներու այդ հայրենասիրական սքանչելի օրինակին, Դերման ազգուկ կառավարութեան անմոռանալի ապտակ մը տուած կըլլան: Սակայն, ափսո՛ս, պէտք է քիչ մը հեղլեն հայրենասիրութենէն պատուաստել մեր վաճառականներուն վրայ:

Կրսեն՝ թէ Բայեստանի շէնքին հիմանը մէջ սա. խօսքը գրուած է. „ազնիւ ու յամառ աշխատութիւն, ազատութեան, արդարութեան ու կարգապահութեան համար, եւ հաւասար սէր դէպի ամենքը“:

Հաւազոյն կըլլար այդ շէնքին ճակատը կապարէ տառերով արձանագրել. „հոս արդարութեան հիմանը վրայ, անարդարութիւնը, բռնութիւնը եւ կեղտակերութիւնը կը բարձրանայ“:

* * *

Ոմանք կը չանան Թիւրքիան հոգեղարձ ընել, անոր վիճը փաթաթելով քարեկորոգումներու. թեթեւակուռ շղթայ մը թող տէր, կը լսէրամ խեղճ Թիւրքիան. լաւագոյն է այսկեանքը թօթափել, քան այդ շղթան կրելը: Մտիկ ընող չկայ: Թիւրքիոյ ամբողջութեան կրակոտ հարցը կայ, պէտք է ձար մը գտնել, որ այդ դիակին կողոպուտին վրայ բոլենները իրար չի զգեն: Ոմանք սակայն իրենց սուրը ու ժանիքները կը սրցնեն այժմէն առաւոր օրուան կազմ ու պատրաստ ըլլալու համար:

Այս մայլ կատակախաղին աւելի զւարճալի կերեւոյթ մը կուտայ Եւրոպական համաձայնութիւն խօսքը, որ օրուան ընթացիկ բանաձեւն է: Ամենէն մեծ դիւանագէտներն իսկ դէպ կամ անդէպ թուփակօրէն կը կրկնեն „եթէ եւրոպական համաձայնութիւնը չըլլար . . . Եւրոպական համաձայնութեան շնորհիւ է, որ . . .“: Հայաստանը կը կոտորեն, Սօլզբրին կամ Հանոթոն ճակատագաց կը յայտարարեն՝ թէ „Եւրոպական համաձայնութիւն կատարեալ է . . .“: Կրետէն կը ոմբակոծեն մէյ մը ալ կը տեսնես դիւանագիտական դահլիճներէն մոլտուկ մ՚է կը փրթի. „Եւրոպական համաձայնութիւնը վճռական է . . .“: Դիւանագէտներուն ըրածը պարզ աչքակապութիւն է. հանրային զգացումը թմրեցնելու համար: Դերմանիան զորօրինակ, այնքան համաձայն է, որքան սուլթանը մեծագին ընծաներ ունի, նոյնպէս Ռուսիան, որքան Թիւրքիոյ երկրաչափական յառաջատութեամբ կործանումը կը նշմարէ եւայլն: Բոլոր տէրութիւններն ալ իրենց խորագոյն հաշիւներուն մէջ ընկղմած՝ ժամանակ չունին այնքան Թիւրքիոյ քրիստոնեաներու ճակատագիրով զբաղիլ. սուլթանը լաւ կը վարէ արդէն . . .

Տէրութիւնները պաշտօնական ծիրանիի տակ, տիպար աւազակային կազմակերպութիւններն են, այս չատ ըմբռնենք: Ենթադրեցէք, որ կիսօրը Մէնմէտ փէշիւան մ՚է, Ցարը Մուսա պէյ մը եւ Ժօզէֆը ճշմարիտ խաչագող մը, աստուածավախութեան կաշիին մէջ բոբիկ սատանայ մը եւայլն: Կառավարական աշխարհին մէջ խիղճ չի կայ. մարդկային ամեն ազատութիւն ու բարօրութիւն անհուն զոհաբերութեան եւ յամառ կռուոյ արդիւնք են: Հերոսութիւնը այդ թագաւորական բաղդակիցներու ձեռքէն ազատութիւնը խլելն է . . . Հայ ազգը հերոսութեան հիանալի ապացոյցներ տուաւ, եւ դեռ պիտի զործէ հրաշալիքներ, վստահ ենք: Ապարէզը քաջերուն ու անձնուրացներուն է: Պէտք է կտրուկ կերպով հասկցնել հելիոկաբալ սուլթանին եւ իր արժանաւոր պաշտօնակիցներուն՝ թէ հայութեան վերէժինդրութիւնը հոն մնայն կը կասի, ուր անգթութեան, անօրէնութեան ու բռնութեան սահմանը կը վերջանայ . . .

Մեզ կը խնայեն տէրութիւնները եւ սուլթանը կը խաղայ մեր զոյութեան հետ:

Հարիւր երկու կիսանդրոյ ամիս անցաւ արիւնլայ հայ աշխարհին վրայէն, տա սկսան նորէն կոտորածները: Եվէրէկի, Թոքաթի մէջ Թիւրք մոլեռանդութիւնը կրկին փրփրեր եւ արիւնահեղ կռիւներ պատահեր են: Թոքաթի մէջ, երբ հայերը եկեղեցի հաւաքած էին, Թիւրքերը յանկարծ յարձակում կընեն, որով ընդհանուր իրարանցման մէջ երկու կողմէն շատեր կապանուին: Ուրիշ տեղեր ալ սպառնալիքներ եղած են: Թրքական կատաղութիւնը արիւնով չի կշտանար, միշտ իրենց հայրենի անասատներուն պէս, որոնք անծրեւով չեն արբենար:

Դեսպանները իբր թէ ազդու դիմումներ ըրեր են Ասիոյ նոր պատուանարներուն առթիւ: Կը խնդրէինք նեսմափայլ դեսպաններէն, որ վերջ դնէին իրենց կատակախաղերուն, ալ հերիք է, որքան ոտնակոխ ըրին մարդկային արժանապատուութիւնը եւ զգան թէ հայերն ալ մարդկային արիւն եւ զգացում կը կրեն: Գ. Նելիտոֆը կը կարծէ թէ միայն Ռուսիոյ կայսրը իրաւունք ունի աշխարհի վրայ ապրելու եւ թէ միայն իրենց զաւակները պէտք է ուրախ ու երջանիկ ըլլան: Ռուսը երբ թաթարական բարբարոս արեան երակներուն մէջ կը հրթիռ տակաւին, հայը ընտանեկան զուրզուրանքի բարձրութեան վրայ կը զտնուէր: Գ. Նելիտոֆ՝ դուք ամբողջ հայ ազգը էիք փոխէք սեւաշուի հարէմի մը հետ, էյ՞ . . . Մենք ձեր այդ տարիքին մէջ, ուր նենգամիտ եւ վատաշ անցեալ մը բարացած մրուր մը կը ձգէ, չենք սպասեր, որ զթութեան բողոքներ ծլին: Դուք կուզէք, որ ամեն բան բանի բ օ ժ է Ց ա բ ի ա խ ա ն ի երգէ, երբ աշխարհ արարատ ձայնը ձգած կաղաղակէ՝ Բ օ ժ է Ց ա բ ի ա խ ա ր ա ն ի:

* * *

Թիւրքիան անկերպարան ամբողջութիւն մ՚եղած է: Ամեն կողմ սունկի պէս ապստամբութիւններ առաջ կուգան: Այս թոնրոնին մէջ նախարարաց մեծ խորհուրդը որոշեր է կայսրութեան նոր վարչութեան ծրագիր մը մշակել... գեղին հոսանքը եւս դարձնելու համար...

Պոլսոյ մէջ ոստիկանութիւնը հոտ առեր է թէ մեծարանակ ռումբ մտեր է. իսկ հայ յեղափոխականները պատրիարքին խնամուցեր են, որ քարեկորոգումներու շղթայազրումը պիտի ստիպէ գիրենք աւելի ուժգին միջոցներու դիմել: Բայց պատրիարքը Բամազանի իթթարի փիլաւը դեռ չէ մարսած: Զարմանալի է. պատրիարքը գնաց մում մը հաց կերաւ եւ սուլթանը ատոր փոխարէն երկու մեծ կոտորածներ պատրաստեց: Եթէ ժում մը հացի համար այդքան կոտորած տուին, սրբազան, ժողովուրդը չըսե՞ր քեզի, կերած իթթարը ոթէպ գայ:

Սակայն ի՞նչ փոյթ յեղափոխականներն ալ իթթարի չի հրաւիրուեցան անշուշտ:

ԱՆՎԵՐՋ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Եւրոպան յապաղում է: Կրետէի պաշարումը կրիայի քայլերով է գնում: Նա սկսուած է ձեւականօրէն, սակայն իրապէս նա ճնում է մի սոսկ ֆիկցիա: Ի՞նչ պաշարում է դա, որ պիտի կատարի ընդամենը մի 3000 մարդկանցով: Ի՞նչ խաղաղութիւն կարող են առաջ բերել մեծ պետութիւնների այդ չնչին ուժերը ապստամբ Կրետէի ներսում:

Պաշարումը կարծեցեալ է, առերեւոյթս: Կրետէն պաշարուած է, սակայն տեսէք, եւրոպական նաւերի քթի տակ Ցունաստանը զէնք ու պաշարեղէն է ներմուծում կղզեի մէջ: Կրետէն պաշարուած է ներդաշնակ Եւրոպայի ուժերով: Բաղդաւոր ներդաշնակութիւն. բաւական է մի թեթեւ քամու հարուած և այդ աւազի վրայ կառուցած ներդաշնակութեան խարխուլ շէնքը կը փլատակի և սապնի պղպջակների նման օդը կը ցնդի . . .

Այո՛, մեծ-մեծ բառեր, բարձրահնչիւն, ազգու սպառնալիքներ . . . Իսկ մեդալի միւս կողմը—անվճռականութիւն, դանդաղկոտութիւն, վարանում:

Այդ է եղել միշտ համերաշխ Եւրոպայի քաղաքականութիւնը արևելեան բոլոր ողբերգութիւնների մէջ: Ամեն մի օր եւրոպական ներդաշնակութիւնը մի նոր ապացոյց է բերում իր հիւանդութեան: Ամեն մի օր մենք ականատես ենք լինում նոր-նոր անակնկալների: Կարծեցեալ ներդաշնակութիւնը Կրիլովի առածին է նմանում, ուր կարապը, խեցգետինը և գայլաձուկը վճռում են առաջ շարժել սայլը: Անգլիան յապաղում է նոր-նոր առաջարկներով: Նոյն իսկ հիւսիսային արջը թողեց յանկարծ իր կատաղի շանթերը և մեղմ ընթացք սկսեց: Ահա Ցարը իր ձեռագիր նամակն է յղում յունական թագուհուն կարօտեալ կրետացիներին նուիրած 50,000 բուբլիով: Ե՞րբ պիտի լինի այս զզուելի կատակերգութեան վախճանը . . .

Եւրոպան չի շտապում. Թերևս շտապելու կարիք էլ չունի։ Նա գիտէ, որ պատերազմը անհնարին է այժմ։ Բալկանների առանց այն էլ անմատչելի կիրճերը այսօր ձիւնի հսկայական զանգուածների շնորհիւ դարձել են լիսպառ անանցանելի։ Յունաստանը անկարող է պատերազմական գործողութիւններ սկսել նախ քան ձիւների հալչելը։ Պէտք է սպասել գարնան. իսկ թէ գարնան ի՛նչ արիւնային թատրոններ կը սարքուին, ի՛նչ ահեղ անակնկալներ կը գան մեր առաջ, այդ էլ տեսնելու բան է։ Այժմ ռուսական զօրքը ահաւոր ուրականի նման կանգնել է Կարսի մօտերքում։ Ի՞նչ ունի նա այնտեղ, ինչու է նա եկել այս տագնապալից պահուն, ի՛նչ չար սատանայական խորհուրդներ ունի նա Ռուս-տաճկական սահմանագլխում։ Արդեօք չի՞ պատրաստւում անել վերջապէս առիւծի հսկայական ոստիւնը և իրագործել հիւսիսային բռնապետութեան հինաւուրց բաղձանքը . . .

Րոպէները ճակատագրական են. ահեղ փոթորիկների նախընթաց օրն է։ Ամենուրեք իրարանցում, անսովոր յուզմունք, տենդային պատրաստութիւններ. վա՜յ նրանց, որոնք պատրաստ չեն լինի անակնունելի արհաւիրքների համար։

Մինչ այս մինչ այն, Թիւրքական բանակում լիակատար քաօս է տիրում։ Անորոշութիւն, անվճռականութիւն, սով, ոգևորութեան և ոչ մի նշոյլ։ Ոչ մի գրաւական, որ Համիդի զօրքը կարող է յաղթութիւն տանել։ Քաղցած զինուորները հարիւրներով փախչում են տաճկական դրօշակից, անցնում են թշնամի Յունաստանի բանակը։ Խեղճութիւնը կատարեալ է։ Չկան նոյնիսկ ձիաներ ռազմամթերքը տեղափոխելու համար, չկան թնդանօթակիր անասուններ։ Սնանկութիւն, լիակատար սնանկութիւն. հասել է վայրկեանը . . . Օսմանեան կիսալուսնի օրհասական ժամը հնչում է . . .

Յառաջ Յունաստան։

ԹՌՈՒՑԻԿ ԹԵՐԹ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

№ 1 ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ № 1

6 Յուն. 97 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ 6 Յուն. 97

ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏՆԵՐՈՒՆ

Ճգնաժամը կը մօտիկնայ օրէօր։ Մենք անոնցմէ չենք, որ խաղաղութիւն վերջնականապէս հաստատուած համարենք։ Հրէշ սուլթանի դաւերը մեր աչքի առաջ պարզուած են. նա նոր պատրաստութիւններ տեսնելու մէջ է։

Հայ ժողովուրդը թշուառութեան հեղեղներու մէջ ինկած՝ այլևս երկար իր՝ գոյութիւն պահպանել անկարող է գազանին ճանկերու մէջ։

Մեզ՝ յեղափոխականներուս վրայ կը ծանրանայ մտածել ժողովրդի գոյութեան մասին. այո, մենք ստեղծեցինք ներկայ դրութիւնը և մենք պիտի լինինք գործը գլուխ բերողները։

Յեղափոխութիւնը չէ մեռած։ Որչա՜փ մեծ կոհերտուինք, այնչափ աւելի պէտք է բորբոքուի մեր մէջ սուրբ կրակը։

Ժողովուրդը մեզ հետ է միշտ. միայն փոքրամասնութիւն մը — հայ հարուստ դասակարգը անտարբեր աչքով կը նայի իւր յեղափոխական զաւակին, իւր փրկութեան համար արիւն թափողին։ Նոր չէ այս անտարբերութիւնը։ Յեղափոխութեան երևան գալէն վեր՝ այդ եղած է միշտ մեր հարուստներուն վարմունքը։ Անոնք տաճկին, քիւրտին չեն խնայեր իրենց բարեկամութիւնը, իրենց հարստութիւնը։ Որչա՜փ դիզուած հարստութիւններ թշնամու ձեռք անցան, մինչդեռ անոնց մէկ հարիւրերորդ մասը ժողովրդի փրկութեան գործի մէջ ահագին դեր կարող էր կատարել։

Եւ այնչափ դառն փորձեր աչքի առաջ ունենալէ յետոյ, ո՞ր հարուստը հաւատք ունի տակաւին իւր ոսկու վրայ։

Սակայն, երբ հայ յեղափոխականը դիմում կանէ հարուստներուն իրենց պարտականութիւնը կատարել տալու համար՝ անոնք առանց կարմրելու երես կը դարձնեն անկէ։

Բայց միթէ յեղափոխութիւնը հարուստներու հետ պիտի վարուի այնպէս՝ ինչպէս մինչև հիմա։ Երբե՛ք։

Երբ սուլթան չի համոզուիր մեր արդար իրաւունքը մեզ տալու, երբ քիւրտը ոսկալի գազանութեամբ չի դադրիր մեր արիւնը խմելէ և մենք պարտաւորուած ենք ուժ գործ դնել անոնց դէմ, ի՛նչ տարբերութիւն անխիղճ սուլթանի, վայրենի քիւրտի և քարասիրտ, անզգայ հայ հարուստի մէջ. բոլորն ալ հաւասարապէս թշնամի են յեղափոխութեան, թշնամի՝ ժողովրդի ազատութեան։

Երբ հասարակ ժողովուրդը հարիւր հազարներով կը մորթուի, կը թալանուի ու այդ չի ազդեր հայ հարուստներու վրայ և նրանք սառն անտարբերութեամբ կը դիտեն իրենց շուրջ, իրենց եղբայրներու դիակներու կոյտեր՝ միթէ անոնց զեղխ ու մոլութիւններով լեփլեցուն կեանքը հիւլէի մը չափ նշանակութիւն պիտի ունենայ մեզ համար։ Ի՞նչ բանի պէտք են հասարակութիւնը կեղեքող այդ տզրուկները։

Այո՛, եթէ այս պատմական սոսկալի ճգնաժամին, հայ հարուստները շարունակեն տակաւին անտարբեր մնալ, եթէ Դաշնակցութեան Վասպուրականի Կեդ. Կոմիտէի կողմէն եղած բացարձակ դիմումները ապարդիւն անցնին՝ մեզ կը մնայ գործադրել ամբողջովին Վասպուրականի Կեդրոնական Կոմիտէի վերջին մէկ որոշումը։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

—Աթէնքից հաղորդում են, որ իբր թէ մինիստր Դելեանիսը ասած լինի, որ Բօլգարիան եւ Սերբիան համաձայն են Յունաստանի հետ միասին Մակեդոնիան բաժանելու, հենց որ Յունա-տաճկական պատերազմը ծագի։

—Ռուսաց Ցարը հաղորդել է Հռովմայ պապին, որ արեւելքի քրիստոնեաները իր մասնաւոր հոգածութեան առարկայ պէտք է լինին։

Այդ խօսքերից յետոյ անմիջապէս ծագեց Թօքաթի կոտորածը։

—Թօքաթում կոտորածի ժամանակ ընկած հայերի թիւը հաշւում էին 18, տաճիկներինը 3։ Յետոյ այդ թւերը սասնապատկւեցին, իսկ վերջնականապէս յայտնի եղաւ, որ քրիստոնեայ նահատակների թիւը 700 է, որոնց մէջ կան եւ յոյներ։

—Ալբանիայում քրիստոնեաները սրբապղծել են մի մզկիթ, որի առթիւ սաստիկ յուզում է տիրում։

—Յունաստանում Պիրէի նաւահանգստում հայերը եւ յոյները յարձակւել են Եգիպտոսից եկած մի նաւի վրայ, որով տաճիկ կառավարութիւնը երկու հայ բանտարկեալ էր տեղափոխում Պոլիս։ Յարձակողները ժանդարմներին ջարդելուց յետոյ, հայ բանտարկեալներին ափ են իջեցնում։

—Խմբապետ Տաքիսը 27 հոգով ներս է խուժել Մակեդոնիա, Գրէվէնայի մօտ կոտորել է 12 զինւոր, վիրաւորել 20-ի չափ եւ վերադարձել Յունաստան։ Տաճկական ծառայութեան մէջ գտնւող մի գերմանական սպայ նոյնպէս վիրաւորւել է։

—Լարիսայից եւ Սալօնիքից եկած հեռագիրները բոլորն էլ դրութիւնը լարւած են համարում եւ ընդհարումը անխուսափելի։

—Յունական թագաժառանգը Լարիսա է հասել, ուր նրան հանդիպել են մեծ շքով եւ ցնծութեամբ։ Այնտեղ նա ընդունել է սահմանագլխի զօրքերի ընդհանուր հրամանատարութիւնը։

—Պոլսում խռովութիւն է տիրում Թօքաթի կոտորածի եւ յեղափոխականների դիմումների առթիւ։ Կառավարութիւնը 80 կասկածելի անձնաւորութիւններ է ցանկացել ձերբակալել, բայց ֆրանսիական դեսպանը արգելք է հանդիսացել։ Բայց եւ այնպէս 17 մարդ է ձերբակալւած։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1896 Թ. Խրկւզ Դժոխքի Բուրվառի միջոցաւ 500 րուբլի։

Եկ-ից Արծիւ խմբից 1460 րուբլի։

Բրայիլայի Դաշնակցական „Փրկութիւն" խմբէն 20 ֆր., Թաթար-Բազարջիկի Դաշնակցական Օժանդակ կօմիտէից 40 ֆր., Տորբիչի „Եփրատ-Վազէ-Արագ" խմբ. դեկտեմբեր ամսոյ մուտք 12 ֆր.

Տապար քղ. կեդ. սնդուկի մէջ ստացւած են.

Դաղթավայր-Խնձորիկից՝ Հ. Թ. 6 րուբլի, Ձ. Գ 15 ր., Ադամ 10 ր., Կ. Պ. 10 ր., Խ. Ե. 5 ր., Խաչոյ 5 ր., Հովասանից Տ. քահանայից 12 ր., Լաստի գիւղից՝ Գասպարիկ 5 ր., Պաղտասարիկ 5 ր., Յակոբիկ 1 ր., Կարապետ 1 ր., Հայրենասէր 7 ր., Ս. Ճ. 1 ր. 50 կ.

Վարնայի կօմիտէի սնդուկի մէջ ստացւած են.

Մշկան խմբից 11 ֆր., Կամաւորաց խմբից 8 ֆր., Ծծան խմբից 6 ֆր., Կայծակ խմբից 2 ֆր., Հարազատ խմբից 2 ֆր., Առիւծ Ն. 3 ֆր., Արաքսի Ս. 1 ֆր., Խաչիկ Ղ. 1 ֆր., Առիւծ 50 ֆր

Գաճիրէի կօմիտէի սնդուկի մէջ ստացւած են.

Ազ-Մուր 10 ղրուշ, Յամսակ Գ. 20 ղր., Դարեհ 10 ղր.: Հեթում 5 ղր., Գառնիկ 5 ղր., Արամազդ 10 ղր., Պարգեւ 10 ղ., (Ապրիլ 15) 10 ղ., Ազ-Մուր 10 ղ., X 20 ղ., Արածան խումբ 60 ղ., Գարեգին 10 ղ., Հայոյիկ 1 անգլ. ոսկի, Թորոս-Ռուբէն 5 ղ., Ասպետ 5 ղ., Ուրագ 5 ղ., Հայկազ 5 ղ., Արտաշ 5 ղ. Արայ 5 ղ., Արծիւ 10 ղ., Ժիրայր 5 ղ., Սագօ 10 ղ., Հայկ 10 ղ., Վիչէն 5 ղ., Շմաւոն 10 ղ., Տատասկ 40 ղ., Սուր 10 ղ., Ս. 10 ղ., Թօփուզ 5 ղ., Բալայեան 5 ղ., Ապառաժ խումբ 35 ղ., Վ-ի ձեռքով երկու անձէ 20 ղ., Հայկ. Կ. Սուրէնց 10 ղ., Պապիկ Ճգնաւոր 10 ղ., Վահան 10 ղ., Սուրէնեան խումբ 30 ղ., Մուշեղ-Բագարատ 10 ղ., Գրգուիչ 5 ղ., Պերճ խումբ 10 ղ., Նահապետ 10 ղ., Լուլթֆ 10 ղ., Որոտան 10 ղ., Կայծակ 5 ղ., Արամազդ 10 ղ., (Ապրիլ 15) 10 ղ., Թորոս-Ռուբէն 5 ղ., Դարեհ 10 ղ., Գառնիկ 5 ղ. Շմաւոն 10 ղ., Վահանակ խումբ 20 ղ.

Ի նպաստ Հարաւային-Ամերիկայ ղրկւած դաշնակցականներու Ամերիկ. Լօվելի Դաշնակցութեան կօմիտէի ձեռամբ հանգանակւած է.

Ս. Խ. 2 դօլլար. Ա. Տ. 2 դլ., Խ. Մ. 1 դլ., Կ. Կ. 50 սէնտ, Յ. Ա. 5 դլ., Ա. Գ. 1 դլ., Պ. Մ. 10 դլ., Թ. Բ. 10 դլ., Կ. Մ. 1 դլ., Թ. Մ. 2 դլ 25 սէնտ, Մ. Յ. 1 դլ., Կ. Յ. 2 դլ., Գ. Կ. 1 դլ., Պ. Գ. 2 դլ., Գ. Խ. 1 դլ., Մ. Ա. 1 դլ., Գ. Ա. 3 դլ., Գ. Ի. 2 դլ., Յ. Գ. 1 դլ., Դ. Մ. 1 դլ., Ա. Ս. 1 դլ., Յ. Մ. 1 դլ., Թ. Մ. 1 դլ., Մ. Գ. 2 դլ., Ս. 1 դլ., Մ. Ե. 1 դլ., Կ. Մ. 1 դլ., Ոմանք 1 դլ. 25 սէնտ, Երկու եղբայր 5 դլ., Քեռի 1 դլ., Տ. Գ. 1 դլ., Ա. Ի. 1 դլ., Կ. Լ. 2 դլ., Գ. Վ. 1 դլ., Փ. Պ. 1 դլ., Պ. Մ. 1 դլ., Ե. Պ. 1 դլ., Պ. Տ. 2 դլ., Մ. Ջ. 1 դլ., Ա. Պ. 50 սէնտ, Ի. Ռ. 1 դլ., Օ. Գ. 50 սէնտ, Գ. Մ 1 դլ., Գ. Ղ. 50 սէնտ, Պ. Տ. 1 դլ., Ք. 25 սէնտ, Յ. Կ. 50 սէնտ, Կ. Մ. 41 սէնտ, Պ. Մ. 50 սէնտ, Պ. 2 դլ., Պ. Մ. 2 դլ., Մ. Մ. 50 սէնտ, Կ. Մ. 1 դլ., Օ. Տ. 45 սէնտ, Յ. Ի. 2 դլ., Կ. 50 սէնտ, Օ. Պ. 1 դլ., Գ. Ն. 1 դլ., Տ. Գ. 2 դլ., Պ. Մ. Ս. 1 դլ., Ս. Ա. 1 դլ., Գ. Ս. 2 դլ., Յ. Տ. 50 ս., Ս. Ճ. 1 դլ., Ժ. 1 դլ., Ս. Ղ. 50 սէնտ, Օ. Ի. 50 ս.

Նաշուայի Դաշնակցութեան կօմիտէի նախաձեռնութեամբ հանգանակած նոյն նպատակով.

Վ. Ծ. 5 դլ., Կ. Ս. 5 դլ., Կ. Ք. 2 դլ. Մ. Մ. 3 դլ., Կ. Յ. 3 դլ., Կ. Ս. 2 դլ., Յ. Կ. 5 դլ., Յ. Ք. 50 սէնտ, Ն. Կ. 2 դլ., Ջ. Կ. 1 դլ., Գ. Ա. 5 դլ., Խ. Թ. 2 դլ., Մ. Պ. 5 դլ., Ա. Տ. 1 դլ. 50 սէնտ, Պ. Կ. 3 Յ. Կ. 2 դլ., Յ. Պ. 1 դլ., Ա. Ք. 1 դլ., Ե. Ա. 1 դլ., Խ. Մ. 1 դլ., Մ. Մ. 1 դլ., Ջ. Ե. 1 դլ., Վ. 5 դլ., Յ. Մ. 2 դլ., Հ. Պ. 1 դլ., Կ. Պ. Մ. 2 դլ.

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցեով՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)